

**ՌՈՒՄ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՐԱՆՍԻ ՆՅՈՒԹԵՐ**

ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՑԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՂԻՐՆԵՐԸ

**ЭТИКО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ БИМЕДИЦИНЫ
LEGAL AND ETHICAL CHALLENGES OF BIOMEDICINE**



ԵՐԵՎԱՆ, 2016

ЕРЕВАН-2016

2016 թվականի ապրիլի 21-ին Ռուս-Հայկական համալսարանում տեղի ունեցավ **«Կենսաբժշկության բարոյաիրավական հիմնախնդիրները»** խորագրով հանրապետական գիտական կոնֆերանս:

Կոնֆերանսին բացման խոսքով հանդես եկան *Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի պրոռեկտոր Պ. Ավետիսյանը, իրավունքի և քաղաքականության ինստիտուտի ղեկավար Լ. Ալավերդյանը, պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ի.գ.դ, դոցենտ Ա. Ղամբարյանը, Երևանի պետական բժշկական համալսարանի հասարակագիտական առարկաների ամբիոնի դոցենտ, փիլ. գիտ. թեկնածու, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղի վարիչ Ս. Դավթյանը, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բիոէթիկայի կաբինետի վարիչ, ԵՆ Բիոէթիկայի կոմիտեի անդամ Բ. Մադոյանը:*

Կոնֆերանսին մասնակցում էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի, Երևանի պետական համալսարանի ներկայացուցիչներ:

Կոնֆերանսի նյութերի ժողովածուն օգտակար է կենսաիրավագիտության, կենսաբժշկության, բիոէթիկայի հարցերով զբաղվող անձանց համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ

Բացման խոսք	5
Вардапетян Г.Р.	5
Мадоян И.А.	7
Դավթյան Ս.Հ.	9
Ղամբարյան Ա.Ս. Իրավագիտության և բիոէթիկայի զարգացման հեռանկարները 21-րդ դարում. Բիոիրավունքի համակարգը	10
Դավթյան Ս.Հ. Մարդու իրավունքները և արժանապատվությունը՝ բիոէթիկական հիմնահարց	27
Մուրադյան Ս.Հ. Արժանապատվության էթիկափիլիսոփայական հիմքերը և այլ հիմնական իրավունքների հետ հարաբերակցության հիմնախնդիրները	36
Немишальян Р.В. Права и обязанности врача и пациента	62
Нерсесова Л.С, Мкртчян С. Селективный аборт как этическая проблема и возможные пути ее правового урегулирования	69
Варданян Л.Г. Тенденции развития права в контексте биоэтики	81
Գեվորգյան Ա.Ա. Փոխնակության՝ որպես վերարտադրողական իրավունքի իրացման հիմնախնդիրները մարդու սոմատիկ իրավունքների լույսի ներքո	97
Թումաայան Դ.Ա. Մարդու օրգանները և հյուսվածքները որպես քրեաիրավական պաշտպանության առարկա	113
Փիրումյան Տ. Հանդուրժողականությունը բիոէթիկայի համատեքստում. բժիշկ-հիվանդ հարաբերություններ	129
Սահակյան Հ.Գ. Կանխարգելման քաղաքականությունը բիոէթիկայի համատեքստում	135
Оганисян М.О. Правовые институты и проблемы защиты животных в Армении.....	141
Казарян К.Т. Биоэтика и медицинское право и реалии в РА	150

ԲՆՅՄԱՆ ԽՈՍԷ

(ВСТУПИТЕЛЬНОЕ СЛОВО)

Уважаемые участники конференции.

Начало третьего тысячелетия ознаменованно бурным развитием биомедицинских наук, которое коренным образом преобразило современное общество. Биомедицинские технологии являются одним из наиболее динамично развивающихся направлений научно-экспериментального знания, которое ныне вторгается даже в область био- и антропогенеза. Искусственное (в том числе экстрокорпоральное) оплодотворение, суррогатное материнство, трансплантация органов и тканей человека, искусственное поддержание жизни и некоторые другие технологии вызывают серьезные споры в обществе в рамках проблемы усиливающегося противоречия между человеком и природой, искусственным и естественным. Особое внимание сегодня привлекают генетические технологии (генодиагностика, генотерапия, создание трансгенных животных, клонирование человека и др.), которые позволяют вмешиваться в са크ральные, сущностные характеристики человеческой личности, отчасти определять наследственные признаки будущих поколений людей. Сегодня, как никогда, остро встает вопрос о пересмотре приоритетов современной науки, объективной оценке пределов допустимого вмешательства в мир природы и в естество человека с учетом морально-этической, нравственной координации.

Из-за отсутствия законодательной базы многие достижения биомедицины в силу своей крайней востребованности начинают применяться, так и не получив надлежащей регламентации со стороны права, что влечет самые серьезные нарушения прав и интересов человека. Отсутствие должной законодательной базы, помимо прочего, тормозит развитие самих биомедицинских технологий, в том числе и тех, без которых в настоящее время немислима эффективная медицинская помощь.

Однако, если в ряде европейских государств за последнее десятилетие предпринимаются меры по устранению законодательного вакуума в указанной сфере, то в Армении соответствующие законопроектные работы могут быть охарактеризованы как вялотекущий процесс. В данной связи возникает опасность проведения на территории нашей страны неконтролируемых биомедицинских экспериментов исследователями из стран с более строгим законодательством. К числу наименее урегулированных законодательством и теоретически изу-

ченных относятся проблемы клонирования человека и других генетических технологий. Особый акцент должен быть сделан на изучении этико-правой стороны клонирования человека как медико-биологической экспериментальной методики, сочетающей наиболее острые проблемы всей биомедицины.

Это позволит законодателю четко решать вопрос о соответствии или противоречии человеческому достоинству тех или иных биомедицинских технологий и ограничить вмешательства в генетические характеристики человека без медицинских показаний. Указанные законодательные изменения послужат этико-правовым фундаментом применения биомедицинских технологий, позволят обеспечить естественные, неотъемлемые, «экзистенциальные» права человека, а также дальнейшее успешное развитие биомедицинской науки.

К сожалению, на сегодняшний день преобладающей формой взаимоотношений этики и права является противодействие, максимально выраженное в таких полярных явлениях, как преступная государственность и моральная коррупция. Феномен моральной коррупции заключается в использовании законов для попирания моральных норм с целью получения субъективной выгоды, например – коррупционный характер некоторых медицинских экспертиз, круговая поддержка врачей в судебных процессах. К их числу относится криминальный черный рынок торговли органами. Нормы морали могут также вступать в противоречия с так называемыми «новыми стандартами». Это означает, что любой человек после смерти может стать донором органов или тканей, если он при жизни или его родственники не заявили письменно о несогласии на посмертное изъятие его органов для трансплантации реципиенту. Согласие лишь подразумевается, но фактически его нет. Изъятие органов без полученного согласия является насильственным превращением умершего в донора и недопустимым нарушением свободы человека. Презумпция согласия должна быть заменена презумпцией несогласия, означающей, что посмертным донором органов и тканей может стать человек, который при жизни дал согласие на донорское использование своего тела после смерти.

Г.Р. Варданян

*Зав. кафедрой медицинской биохимии
и биотехнологии РАУ, д.б.н.*

Многоуважаемый председатель!

Уважаемые коллеги!

Прежде всего, позвольте поздравить вас с началом конференции. Название темы нашего собрания, состав участников позволяют мне высказать мнение о том, что нынешняя конференция своеобразна в своем подходе к проблемам биомедицины, биоэтики. Акцент, как я понимаю, ставится на правовом осмыслении процессов развития биомедицины, основываясь на беспрецедентных достижениях биологических и медицинских технологий в науках о жизни. Воодушевляет то, что впервые в Армении моральные нормы оценки подобных технологий будут рассматриваться через призму юридического права.

Должен отметить, что за последние 30–40 лет появилось достаточное количество международных и национальных правовых, нормативных документов, касающихся сферы биоэтики. Среди них мне бы хотелось выделить два документа, имеющих всеобъемлющий биоэтический и правовой характер. Первый – «Всеобщая декларация о биоэтике и правах человека», принятый 19 октября 2005 года 33-й сессией Генеральной конференции ЮНЕСКО. Это первый международный правовой акт в биоэтике, принятый всеми правительствами аккламацией (т.е. аплодисментами). ООН, в частности, ЮНЕСКО приняли еще ряд документов, касающихся более узких, но очень важных аспектов биоэтики. В ЮНЕСКО есть авторитетные Совещательные структуры по биоэтике, такие, как: Международный комитет по биоэтике (МКБ) и Межправительственный комитет по биоэтике (МПКБ). Более того, биоэтика является приоритетом в деятельности ЮНЕСКО в области социальных и гуманитарных наук. В ЮНЕСКО есть также программа по созданию кафедр ЮНЕСКО в различных областях деятельности, естественно, и по биоэтике. В Армении в свое время были основаны 9 (девять) кафедр ЮНЕСКО по определенным направлениям знания. К сожалению, кафедры ЮНЕСКО по биоэтике среди них не существует. Однако в ЕГУ на факультете биологии несколько лет назад был создан кабинет биоэтики, который, по сути, выполняет все функции, требуемые ЮНЕСКО к своим кафедрам по биоэтике.

Второй документ, на котором я бы хотел остановиться – это Конвенция Совета Европы о защите прав человека и достоинства человеческого существа в связи с использованием достижений биологии и медицины: конвенция о правах человека и биомедицине. Иначе это

называется «Конвенция о биоэтике» или «Овьедо Конвенция» (по месту ее принятия в 1997 году). Конвенция на сегодняшний день содержит также 4 дополнительных протокола. В ближайшее время будут приняты еще два дополнительных протокола к конвенции Комитетом биоэтики СЕ. Две трети стран-членов Совета Европы подписали Конвенцию биоэтики, а многие из них подписали и ратифицировали также дополнительные протоколы к конвенции. Государства, которые не подписали Конвенцию Совета Европы, я бы разделил на две группы по мотивам их воздержания от подписания. Первая группа стран обосновывает свое решение таким образом: наше национальное законодательство в области биоэтики гораздо строже, жестче, чем «Овьедо Конвенция». Если подпишем, говорят они, мы вынуждены будем ослабить наши национальные законы в соответствующих областях. Должен отметить, что это те страны, где биоэтическая школа чрезвычайно развита, где имеются влиятельнейшие национальные биоэтические структуры, больницы и клиники «снабжены» этическими комитетами, более того, эти страны – самые активные разработчики «Конвенции биоэтики». Вторая группа стран, не подписавших «Конвенцию биоэтики», в своих рассуждениях придерживается следующих позиций: если мы подпишем «Конвенцию биоэтики», нам необходимо будет изменить наше законодательство, введя системное усиление регламентирующих норм между врачом и пациентом, между исследователем и испытуемым, между экспериментатором и учебными, опытными животными, в регламентации деятельности социальных служащих и т.д.

Как видим, сфера применения знаний и опыта в областях био-этики и био-права чрезвычайно обширна и актуальна. Поэтому я призываю будущих юристов обратить внимание на то, что правовая ниша в этой области в Армении свободна. Я уверен, что через три–четыре года такая специальность, как юрист-биоэтик, будет очень востребована в нашей стране, как она востребована во всем цивилизованном мире.

И.А. Мадоян

*Президент «Национального центра биоэтики»,
зав. кабинетом биоэтики факультета биологии ЕГУ,
член Комитета биоэтики Совета Европы*

Հարգելի՛ գործընկերներ,

Թույլ տվեք ողջունել գիտաժողովի մասնակիցներին և հույս հայտնել, որ այն մի նոր խթան կհանդիսանա բիոէթիկայի հումանիստական գաղափարները մեր հանրապետությունում ներդնելու համար: Ես պատիվ և հաճույք ունեմ փոխանցելու ձեզ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղի այն անդամների ողջույնի խոսքը, որոնք հարգելի պատճառով չկարողացան մասնակցել մեր այսօրվա գիտաժողովին: Ռուբեն Հովհաննիսյան՝ պրոֆեսոր, բժշկական սեղմագրերի հայկական հանդեսի գլխավոր խմբագիր, Արտակ Դավթյան՝ ՀՀ ԱԺ գիտության, կրթության մշտական հանձնաժողովի նախագահ, ինչպես նաև Վիլեն Հակոբյան՝ ակադեմիկոս և այլք:

Ողջույնիս խոսքն այլ պետք է լիներ, եթե չլինեին ապրիլի 2-ից սկսած արյունալի իրադարձությունները Արցախի ու Ադրբեջանի շփման գծում:

Փաստերը վկայում են, որ Հովհաննես Թումանյանը, ցավոք, սխալվել էր, կարծելով, որ «բերանն արնոտ **մարդակերը** են անբան հազար տարում հազիվ դառավ **մարդասպան**»: Ավաղ, ոչ միայն խաղաղ բնակչության, երեխաների, ծերերի, կանանց, այլև դիակների նկատմամբ իրականացված անարգանքը, խոշտանգումները, վանդալիզմը ստիպում են եզրակացնել, որ հակառակորդը մնացել է մարդակերի մակարդակում և դեռևս մարդասպան չէ և իր կատարածը կապ չունի քաղաքակիրթ աշխարհի ո՛չ իրավական, ո՛չ բարոյական որևէ նորմի հետ:

Ս.Հ. Դավթյան

*Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական
համալսարանի հասարակագիտական առարկաների*

ամբիոն, փիլ. գիտ. թ., դոցենտ,

*ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական
մասնաճյուղ, վարիչ*

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԷԹԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 21-րդ ԴԱՐՈՒՄ.
ԲԻՈԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Ա.Ս. Ղամբարյան

*ՀՌՀ պետության և իրավունքի տեսության ամբիոնի վարիչ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր*

Պոստմոդեռնիզմը և մարդու մարմինը: Հետմոդեռնիստական պայմաններում բիրթժշկության նորարարությունները մեկնվում են սպառման հասարակության բարոյականության տեսանկյունից, որտեղ մարդկային կյանքի իմաստը իջեցվում է նյութական բարիքներ ձեռք բերելու և հեղոնիզմի (հաճույքի գերակայություն) աստիճանին: Ժ. Բոդրիարը խոսում էր մարմինն ազատականացնելու, մարմնի պաշտամունքի և սեռական ազատության մասին: Մարմնի երկրպագման դրսևորում էր համարում սպորտը քարոզելու աղմուկը, կոսմետիկ միջոցների և մարմնի խնամքի այլ միջոցների գովազդը: Նա նշում էր, որ մարմնի պաշտամունքը վկայում է այն մասին, որ մեր ժամանակներում այն զբաղեցրել է հոգու տեղը¹:

Բնավ իմ խնդիրը չէ և ձեռնահաս չեմ քննարկել հետմոդեռնիստական հասարակության արժեհամակարգի կամ դրա բացակայության աստվածաբանական և փիլիսոփայական պահպանողական և վերացական ծայրահեղ բարդ հարցերը: Սակայն մտորումների տեղիք է տալիս ժամանակակից հասարակությունը բացասական իմաստով սպառման միջավայր ներկայացնելու դիրքորոշումը: Արդյո՞ք որևէ հասարակություն չի սպառում տվյալ ժամանակի և տարածության մեջ շնորհված նյութական և ոչ նյութական, այդ թվում՝ մարդկային ռեսուրսները, բարիքները: Նախնադարյան հասարակարգում բացարձակ ազատ մարդը սպառում էր իր նմանին՝ նրան ազատորեն ֆիզիկապես ոչնչացնելու ձևով (մարդը մարդուն գայլ է), ստրկատիրական հասարակարգում ազատները սպառում էին անազատներին՝ նրանց որպես գույքը տնօրինելու եղանակով,

¹ *Бодрийяр Ж.* Общество потребления. <http://gtmarket.ru/laboratory/basis/3464/3471> (26.01.2016).

Ֆետոլալիզմի ժամանակ՝ եկեղեցականներն սպառում էին անհավատներին՝ ինկվիզիցիայի ենթարկելով, բուրժուական հասարակարգում՝ տնտեսապես հզորները սպառում էին տնտեսապես թույլերին՝ նրանց աշխատանքային ունակությունները շահագործելով, խորհրդային ժամանակաշրջանում պետությունն էր սպառում մարդուն՝ ինքնավարության, անհատականության և ազատության տարրական հնարավորությունները քնեցնելու եղանակով: Սպառման այս ողջ շղթայում թերևս առավել թույլատրելին մարդու կողմից սեփական մարմնի սպառումն է, հատկապես եթե այդ սպառումը կատարվում է սպորտի եղանակով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևմտյան հասարակությունում ընդհանրացվեց այն գաղափարը, որ բարոյական փոխգործակցության կարևորագույն տարրն անհատի ինքնավարությունն է, ինչը հիմք հանդիսացավ ամերիկյան ընտանիքի վերափոխման, ֆեմինիստական շարժման առաջացման, ինչպես նաև բժիշկ-հիվանդ հարաբերությունների վերաձևակերպման համար: Բարոյագետ Ժերարդ Դվորկինը բուժօգնության բնագավառում, ամփոփելով բժիշկ-հիվանդ փոխհարաբերությունների բնույթը, եզրակացրեց, որ «բժշկի որոշումը լավագույնն է» հասկացությունը իր տեղը զիջել է բուժօգնության բնագավառում հիվանդի որոշման կարևորմանը՝ «սա իմ մարմինն է» արտահայտության ներքո²:

Մարդը միշտ էլ ուշադրություն է դարձրել իր մարմնին, սակայն այսօր մարդու մարմինը դառնում է պաշտամունքի առարկա: Փիլիսոփաները նշում են, որ մարդու մարմնի ֆենոմենի մասին են վկայում.

1. առողջական խնդիրների սրացումը, որն առավել արդիական է խոշոր քաղաքներում՝ հոգեկան շեղումները, ներոզները, սիրտ-անոթային հիվանդությունները, թմրադեղերից և ալկոհոլից կախվածությունը,

2. ժամանակակից աշխարհում մարդկային անհատականության արժեքի բարձրացումը և մարմնի որպես անձնային ինքնադրսևորման միջոցի ընկալման սրացումը,

3. ժամանակակից քաղաքակրթությունում սեռական վարքագծի և

² Gerald Dworkin Can You Trust Autonomy?, 33 Hastings Ctr. Rpt. 42 (2003), ըստ Bioethics and the law / Janet L. Dolgin, Lois L. Shepherd. [2nd ed.] 2009. P. 46.

սեռական մշակույթի հիմնախնդրի սրացումը: Էրոտիզմը վաղուց դադարել է լինել մարդու մասնավոր կյանքի մաս: Զանգվածային լրատվության միջոցներով այն դառնում է ագրեսիվ և պարտադրված:

4. Ժամանակակից քաղաքակրթությունում մարդու մարմնի՝ որպես խորհրդանշային արժեք կրողի ընկալումը: Նոր սոցիալական խմբերը և երիտասարդական միավորները՝ պանկեր, բայկերներ, սքեյթբորդիստներ, նուդիստներ, միասեռականներ և այլն, ձգտում են հաստատել իրենց կարգավիճակը և արտաքին հատկանիշները (ատրիբուտները),

5. Էվթանազիայի, վերարտադրողական տեխնոլոգիաների, աբորտի, կլոնավորման, օրգանների փոխպատվաստման, բժշկական օրենսդրության հարցերը և այլն³:

Գիտության բնագավառում ժամանակակից բացահայտումները և նորարարությունները նախադրյալներ են ստեղծում վերակառուցելու իրավական և բարոյական ավանդական արժեքային կողմնորոշումները և դիրքորոշումները: Նման վերափոխումներն իրենց ազդեցությունն են թողնում նաև գիտության ճյուղերի և գիտակարգերի կոնվերգենցիայի վրա. ժամանակակից գիտական հետազոտություններին ներհատուկ է միջճյուղային հետազոտությունները: Ասվածի համատեքստում բացառություն չէ նաև իրավագիտությունը և բժշկությունը, որոնց խաչման կետում է գտնվում բժշկական իրավունքը և բիոէթիկան:

Հիմնական հասկացություններ: Բիոէթիկան համեմատաբար նոր միջճյուղային գիտություն է և գիտակարգ, որի հասկացության ապարատը դեռևս հստակեցված չէ, հստակ չէ նաև նրա ուսումնասիրության առարկան կազմող հարցերի շրջանակը⁴:

Ինչպե՞ս է մեկնվում «բիոէթիկա» հասկացությունը, ի՞նչ հարցեր է այն ուսումնասիրում: Բացատրական բառարաններում բիոէթիկական դիտվում է սոցիալական փիլիսոփայության ուղղու-

³ *Лохов С.А.* Феномен тела как проблема философской антропологии. Автореф. дис. канд. филос. наук. М.: 2003. С. 3–4.

⁴ Տե՛ս *Ղամբարյան Ա.Հ.* Բիոէթիկա: Դասագիրք, Եր.: Երևանի պետ. բժշկ. համալս., 2009, Կենսաէթիկայի հիմնահարցեր: Ուսումնասօճանդակ ձեռնարկ: Կազմողներ՝ Հրաչ սրկ. Մարգարյան, Վարդան սրկ. Ասլանյան. Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2015:

թյուն, որի խնդիրն է ուսումնասիրել կենսաբանական գիտությունների բարոյաէթիկական, սոցիալ-քաղաքական և մարդաբանական տեսանկյունները:

Բիոէթիկա եզրույթը կենսաբանների կողմից մշակվել է 1970-ականների սկզբին՝ հրատապություն ներկայացնող երկու թեմաների հանրային և մասնագիտական քննարկումները խթանելու նպատակով՝ 1. երկրագնդի էկոլոգիան պահպանելու պատասխանատվությունը, որից կախված են մարդկային կյանքը և կյանքն ընդհանրապես, 2. բնական գիտությունների արագ առաջխաղացումների հնարավոր հետևանքները՝ հաշվի առնելով մարդկային բնույթի հնարավոր փոխակերպումները⁵: «Բիոէթիկա» բառը շրջանառության մեջ է դրել ամերիկացի ուռուցքաբան Վ. Փոթերը, ով 1971թ. հրատապակեց «Բիոէթիկա. կամուրջ դեպի ապագան» աշխատությունը: Վ. Փոթերը բիոէթիկան դիտում էր բնական և հումանիտար գիտությունների միջև կամուրջ:

Ընդ որում, անգլալեզու աղբյուրներում նշվում է, որ Կոնգրեսի գրադարանի կատալոգում «բիոէթիկա» բառի առաջին հղումը 1973թ.-ին արվել է Դ. Կալահանի «Բիոէթիկան որպես գիտակարգ» հոդվածին: Որոշները բառի առաջին օգտագործումը վերագրում են 1971թ. հիմնադրված՝ Մարդու վերարտադրողականության և բիոէթիկայի Ջոզեփ և Ռոուզ Քենեդիի անվան ինստիտուտին⁶:

Վ. Փոթերը գիտաժողովներից մեկում նշել է. «Բիոէթիկան նոր բարոյագիտական ուսմունք է, որը միավորում է խոնարհությունը, պատասխանատվությունը և ձեռնհասությունը, այն միջճյուղային գիտություն է, որը միավորում է բոլոր մշակույթները և ընդլայնում է «մարդասիրություն» բառի նշանակությունը»⁷: Վ. Փոթերը, «բիոէթիկա» բառն օգտագործելով, փորձում էր շեշտել, որ մարդու գոյատևումը կախված է կենսաբանական գիտելիքների վրա հիմնված էթիկայից, այսինքն՝ բիոէթիկայից: Այս հայեցակարգում ինտեգրվում են կենսաբանությունը և մարդկային արժեքները⁸:

⁵ Encyclopedia of bioethics / Stephen G. Post, editor in chief. 2004. 3-rd ed. P. 12.

⁶ Bioethics and the law / Janet L. Dolgin, Lois L. Shepherd.[2nd ed.] 2009. P. 7.

⁷ Potter V.R. Bioethics: Bridge to the Future. Englewood Cliffs: Prentice-Hall; 1971.

⁸ Peter J. Whitehouse The Rebirth of Bioethics: Extending the Original Formulations of Van Rensselaer Potter. The American Journal of Bioethics. Volume 3, Issue 4, November, 2003, P. 26-31.

Ի՞նչ հարցեր է ուսումնասիրում բիոէթիկան: Բիոէթիկայի զարգացման սկզբնական փուլի արդյունքներն արտացոլվեցին «Բիոէթիկայի հանրագիտարան» չորս հատորյակում, որտեղ քննարկվում էին 5 խումբ հարցեր: Առաջին խումբ հարցերն էին՝ բիոէթիկայի հասկացությանը ապարատի տեսական հենքը, առողջության և հիվանդության, կյանքի և մահվան, մարդու և անձի հասկացությունները: Երկրորդ խումբ հարցերն առնչվում էին մարդու գոյության ծայրահեղ և ոչ ստանդարտ իրավիճակներին՝ ծնունդ և մահ, հիվանդություններ, օրգանների փոխպատվաստում: Երրորդ խումբ հարցերը վերաբերում են մարդու կենսաբանական բնույթի միջամտությանը, որը հաճախ թելադրված էր նրա առողջությամբ: Չորրորդն ընդհանուր բնապահպանական ուղղվածության հարցեր էին՝ շրջակա միջավայրի պահպանություն, կենդանիների պաշտպանություն: Հինգերորդ խումբ հարցերը վերաբերում էին սոցիալական անհնազանդությանը, հայրավարությանը (paternalism), արդարության և ապագա սերունդների նկատմամբ բարոյական պատասխանատվությանը⁹: Ինչպես նկատում ենք, ԱՄՆ-ում բիոէթիկան ընդգրկում է ուսումնասիրվող հարցերի լայն շրջանակ:

Բժշկական դաշտում բիոէթիկայի կարգավորման առավել ընդհանրական հարաբերություններն են՝ 1. բժիշկ-այցելու փոխհարաբերությունները, 2. բժշկական ոլորտի մասնագետ աշխատակիցների ներքին ուղղահայաց փոխհարաբերությունները (վարչական ստորաբաժանումների, բժշկի և բուժանձնակազմի հարաբերությունները), 3. բժշկական ոլորտի մասնագետների ենթախմբերի ուղղահայաց հարաբերությունները (վիրաբույժ-ուռուցքաբան-գինեկոլոգ և այլն), 4. բժշկական պրակտիկայում սեփականության և շահույթի հարաբերությունները, 5. բժշկական օգնության էթետիկ նորմերը, 6. գիտության նոր ձեռքբերումների և դրանք բժշկական պրակտիկայում օգտագործելու չափանիշները, 7. իր առողջության նկատմամբ այցելուի բարոյական կարգավիճակը և այլն¹⁰:

Բիոէթիկայի ուսումնասիրության առարկայի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումները վկայում են ոլորտի համընդգրկունու-

⁹ Encyclopedia of Bioethics. N.Y., 1978. <http://www.onlinedics.ru/slovar/soc/b/bioetika.html> (25.01.2016).

¹⁰ *Воробьева Л.В.* Медицинское право: учебное пособие. Тамбов: Изд-во ГОУ ВПО ТГТУ, 2010. С. 13.

թյան մասին, որոնք կարիք ունեն դեռևս համալիր ուսումնասիրության և հստակեցման: Արտասահմանյան գրականության մեջ ակտիվորեն քննարկվում է նաև իրավունքի և բիոէթիկայի փոխհարաբերակցությունը, ընդամին խոսվում է նոր իրավաբանական տեսության՝ այն է բիոիրավագիտության և նոր իրավունքի ճյուղի՝ բիոիրավունքի կայացման մասին (այս մասին ստորև):

Իրավագիտության և բիոէթիկայի սիներգետիկան: Խորհրդային և հետխորհրդային ժամանակահատվածում իրավաբանական հետազոտություններն առավելապես նպաստակառուղոված են պոզիտիվիստական հենքի վրա մեկնաբանել գործող իրավունքը (օրենսդրությունը): Խորհրդային իրավագիտությունը գուրկ էր գիտական ազատությունից և պրոակտիվ գործելառճից: Նման մոտեցումը հիմնականում պահպանվում է նաև ներկայիս իրողություններում, երբ համալսարանական իրավագիտությունը չի կարողանում ազատագրվել նախկին պոզիտիվիստական դոգմաներից և համարժեք կերպով արձագանքել հանրային կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող ահռելի փոփոխություններին:

Խորհրդային իրավագետները հասարակական նշանակության շատ հարցեր դիտարկում են իրավագիտության ուսումնասիրության առարկայից դուրս, այլ գիտությունների՝ փիլիսոփայության, աստվածաբանության, բժշկության, քաղաքագիտության տիրույթում և, բռնելով կրավորական կեցվածք, ձեռնպահ են մնում ներքաշվելու հատկապես հասարակության համար բաց նշանակություն ունեցող հարցերը (կյանքին և մահվանը, ընտանիքին, ամուսնությանը վերաբերող ոչ ստանդարտ հարցերը) քննարկելուց: Նրանց պատկերացմամբ իրավաբանը պետք է լուրջ իրավաբանորեն գրագետ ձևակերպի նշված հարցերի վերաբերյալ փիլիսոփաների, բժիշկների, աստվածաբանների և քաղաքական գործիչների ձեռքբերած հնարավոր համաձայնությունները: Նման մոտեցումը ոչ այլ ինչ է, քան իրավագիտությունը ստրկացնելու խորհրդային մտածողության շարունակությունը: Ավելին, երբ անհրաժեշտություն է առաջանում իրավական կարգավորման ենթարկել իրավաբանին «օտար և անծանոթ» հարաբերություններ (օրգանների փոխպատվաստում, փոխնակ մայրություն և այլն), ապա այս դեպքում իրավագիտությունը, չունենալով համապատասխան գործիքակազմ, պատրաստ չէ բովանդակային

քննարկումների, որի արդյունքում իրավաբանը ձեռք է բերում պարզապես իրավական տեխնիկայի կանոնները պահպանողի, իսկ լավագույն դեպքում՝ զարգացած պետությունների համանուն օրենքները թարգմանողի կարգավիճակ:

Համամիտ ենք այն մտտեցմանը, որ իրավաբանական գիտությունը տարվել է միայն իրավաբանական-դոգմատիկ ուսումնասիրություններով՝ անցնելով բժշկության, կենսաբանության, մոլեկուլյար ինժեներիայի հիանալի բացահայտումների և նրանց հետ կապված մարդու իրավունքների և արժանապատվության հարցերի կողքով¹¹:

21-րդ դարի մարտահրավերների համատեքստում՝ շուտ փոփոխվող հասարակությունում խիստ կարևոր են տարբեր գիտությունների մասնագետների միջգիտական բնույթի երկխոսությունները: Բիոէթիկական փրկիստփայության, բժշկության և իրավագիտության ոլորտի մասնագետների երկխոսության հիանալի դաշտ է: Ինչքան էլ տարբեր են նշված մասնագետների լեզվամտածողությունը, փաստարկումների բնույթը և հանրային ու մասնավոր շահի վերաբերյալ հայեցակարգային մտտեցումները, միևնույն է նրանց միջև երկխոսությունը չունի այլընտրանք:

Բիոէթիկայի սահմանադրականացումը: ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխություններն ազդարարում են իրավագիտության տեսանկյունից բիոէթիկայի հարցերի քննարկման հույժ կարևորության մասին: ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում որպես նոր բովանդակության իրավունք, ամրագրվեց ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը¹²: ՀՀ Սահմանադրու-

¹¹ Ковалев М.Н. Генетика человека и его права (юридические, социальные и медицинские проблемы). Государство и право, 1994. № 1. С. 15.

¹² Գրականության մեջ արդարացիորեն տարանջատվում են անձնական անձեռնմխելիության իրավունք (security of the person) և ֆիզիկական ամբողջականության իրավունք (integrity of the person) տերմինները: Առաջինը եկթաղում է անօրինական կալանքի և ձերբակալման արգելքը, իսկ երկրորդը՝ ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիությունը: Կենսաբժշկության ոլորտում ֆիզիկական ամբողջականության իրավունքը հետազոտական նպատակներով մարդու օրգանիզմի միջամտությունից ազատության իրավունքն է: Тарасьянц Е.В. Международная защита и поощрение прав человека в области биомедицинских исследований. Автореф. канд. юрид. наук. М., 2010. С. 12.

թյան 25–րդ հոդվածի 3–րդ հոդվածի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը, իսկ 4-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետևանքների մասին¹³:

ՀՀ սահմանադրական տեքստում «Եվգենիկա» եզրույթն օգտագործվում է առաջին անգամ: Եվգենիկան (հունարենից՝ ազնվացեղ, տոհմական) ուսմունք է մարդկային բնույթը կենսաբանական եղանակով բարելավելու մասին: Ընդհանուր առմամբ, եվգենիկական փորձերի սահմանադրական արգելքի նպատակն է զսպել գիտական կամ քաղաքական՝ կասկածելի նպատակներ հետապնդող՝ բնակչության գենոֆոնդի «վավասերման» հետազոտությունները, ինչպես նաև «գենետիկ նորմերի» սելեկցիան:

ՀՀ Սահմանադրության նշված նորմը ՀՀ իրավական համակարգի օրակարգ է բերելու, ի թիվս այլոց, հետևյալ հարցերը.

1. Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի (Օվիդեոյի կոնվենցիա) ստորագրման և վավերացման վերաբերյալ քննարկումները¹⁴.

2. «Եվգենիկական փորձեր» սահմանադրական հասկացության ուսումնասիրություն և սահմանների հստակեցումը: Նախ՝ ՀՀ սահմանադրությամբ արգելվում է ոչ թե եվգենիկական գործունեությունն ընդհանրապես, այլ միայն փորձերը, մինչդեռ արդեն բնակչության տեսակի ընտրության մի շարք մեթոդիկաներ անցել

¹³ Նշենք, որ նմանաբնույթ սահմանադրական նորմեր ամրագրված են նաև Եվրոպական մի շարք պետությունների Սահմանադրություններում: Այսպես, Հունգարական Սահմանադրության 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է եվգենիկական գործունեությունը, ֆինանսական շահույթ ստանալու նպատակով մարդու մարմինը կամ դրա մասերը օգտագործելը, ինչպես նաև մարդու կլոնավորումը: Շվեյցարիայի Սահմանադրության 119-րդ հոդվածը արգելում է ցանկացած ձևով կլոնավորման և մարդու գենետիկ ֆոնդի միջամտությունը:

¹⁴ Կոնվենցիան 04.04.1997թ.-ից բաց է ստորագրման համար: Այն ուժի մեջ է մտել 01.12.1999թ.:

են գուտ փորձարկման փուլը և ինքնուրույն գործունեություն են: Երկրորդ՝ տարբերակվում է բացասական եվգենիկան (կոնկրետ անձի գենետիկայի բժշկական միջամտությունը՝ նրա մոտ անբուժելի հիվանդությունները վերացնելու նպատակով) և դրական եվգենիկան (մարդու ժառանգականության բիոտեխնոլոգիական միջամտությունը՝ նրա «ցեղատեսակի» սելեկցիոն փոփոխության, լավասերման նպատակով): Բարոյագետները նշում են, որ առաջին եվգենիկան սկզբունքորեն ողջունելի է, իսկ երկրորդը՝ կասկածների և առարկությունների տեղիք է տալիս¹⁵:

3. Եվգենիկայի սահմանադրական արգելքի համատեքստում ընթացիկ օրենսդրության համակարգային վերանայումը, մասնավորապես՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կամավոր բժշկական ամլացման և արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորման նպատակով դոնորական սերմի գատորոշման և ընտրության իրավակարգավորումների ուսումնասիրությունը և հստակեցումը¹⁶: Պետք է նկատի ունենալ, որ եվգենիկայի տեսակ են մարդու ընտրությունն ըստ սեռի, ինչպես նաև հիվանդ կամ սոցիալական տեսանկյունից անցանկալի «գենոֆոնդ» ունեցող մարդկանց վերարտադրման բացառումն՝ ամլացման եղանակով:

4. Եվգենիկական փորձերը (գործունեությունը), մարդու վերարտադրողական կլոնավորումը, ապագա երեխայի սեռը պլանավորելու համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ կիրառելը և բիոէթիկայի ոլորտում այլ հանրորեն վտանգավոր արարքները ՀՀ քրեական օրենսգրքում որպես ինքնուրույն հանցագործություններ նախատեսելը:

Բիոէթիկայի հարցերը ներթափանցել են նաև հանրային և մասնավոր իրավունքի տարբեր շերտեր:

¹⁵ *Кучерова И.А.* Современные биотехнологии: социально-этические аспекты. Автореф. дис. канд. филос. наук. М.: 2006. С. 5.

¹⁶ Կամավոր բժշկական ամլացում՝ վիրաբուժական միջամտություն, որը կիրառվում է որպես մշտական բեղմնականիման եղանակ և կատարվում է միայն կամավոր սկզբունքով՝ անհատի (ամուսինների) իրազեկված համաձայնության հիման վրա:

Բիոէթիկայի հարցերը քրեական դատավարությունում: Քրեական դատավարությունում հանդիպում են իրավիճակներ, երբ ապացույց հավաքելու նպատակով մարդու մարմնից անհրաժեշտ է վերցնել արյան, մեզի, մազի, սպերմայի և այլ արտաթորանքների նմուշներ: Գործնականում նաև հանդիպում են դեպքեր, երբ մարդը, օրինակ, թմրամիջոցները պետական սահմանով անցկացնելու նպատակով թաքցնում է իր օրգանիզմում: Բիոէթիկայի և մարդու իրավունքների տեսանկյունից պետք է քննարկել քրեական դատավարությունում հարկադրաբար նմուշներ վերցնելու կամ մարդու օրգանիզմում թաքնված թմրամիջոցները ձեռք բերելու նպատակով հարկադիր բժշկական միջամտության թույլատրելիության հարցերը:

Բիոէթիկայի հարցերը քրեական և քրեակատարողական իրավունքներում: Քրեական իրավունքում քննարկվում են մարդու օրգանների առուվաճառքի, ապօրինի աբորտի և բիոէթիկայի տիրույթում գտնվող շատ հարցեր: Վերջին ժամանակներում ակտիվացել են նաև կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից սննդի ընդունումից գիտակցաբար հրաժարվելու դեպքում նրա կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ, մասնավորապես՝ սննդի ընդունումից հրաժարված կալանավորված անձի կամ դատապարտյալի գիտակցության մթազմման կամ կորստի, ինչպես նաև կոմայի մեջ ընկնելու դեպքում համապատասխան անհրաժեշտ բժշկական միջամտության իրավաչափության հարցերը:

Բիոէթիկայի հարցերը մասնավոր իրավունքում: Քաղաքացիական իրավունքում քննարկվում են մարդու կենսաբանական օբյեկտները (առանձին օրգաններ, հյուսվածքներ, այդ թվում՝ արյունը, մարդու մահից հետո նրա մարմինը, մարդու վերարտադրումը պայմանավորող կենսաբանական օբյեկտները) որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ դիտարկելու հարցը: Կենսաօբյեկտները, մարդու մարմնից առանձնացվելու պայմաններում ձեռք են բերում քաղաքացիական իրավունքի օբյեկտներին հատուկ հատկանիշներ (օգտակարություն, առանձնացվածություն), ուստի կարող են հանդիսանալ քաղաքացիական իրավունքի օբյեկտներ: Մարդու օրգանիզմից անջատվելուց հետո կենսաօբյեկտների նկատմամբ մարդը ձեռք է բերում սեփականության,

ինչպես նաև այլ գույքային իրավունքներ¹⁷:

Կենսաօբյեկտների գույքային շրջանառության հարցերը կարիք ունեն քրեաիրավական և քաղաքացիաիրավական համալիր ուսումնասիրության, քանի որ ՀՀ քր. Օր. 132–րդ հոդվածում օրգանները կամ հյուսվածքները վերցնելը դիտարկվում է որպես մարդու շահագործման ձև:

Բիոտեխնիկայի իրավական կարգավորման համառոտ պատմությունը: Բիոտեխնիկայի իրավական պատմությունն սկսվում է 1947թ. Նյուրնբերգյան դատավարությունից, երբ մարդկությունը քննադատեց նացիստական բժիշկների կողմից մարդկանց նկատմամբ կատարված հակամարդկային հետազոտությունները: Նյուրնբերգյան դատավարության ընթացքում պարզվեց, որ նացիստական բժիշկներն սպանել են ֆիզիկական և հոգեկան սահմանափակումներ ունեցող և հասարակության համար «անպիտան» 70000 մարդ: Աշխարհն առաջին անգամ կասկածի տակ դրեց բժշկի բարեխղճությունը և բժշկական էթիկան, և այդ ժամանակ մշակվեց մարդկանց նկատմամբ հետազոտություններ կատարելու բարոյաիրավական առաջին կանոնները («Նյուրնբերգյան օրենսգիրք»):

1960-1970թթ. ԱՄՆ-ում նույնպես բացահայտվեցին մարդու նկատմամբ բժիշկների հակամարդկային փորձարկումների դեպքեր: Այսպես՝ 1963թ. Բրուկլինի՝ քրոնիկ հիվանդություններով տառապող անձանց համար նախատեսված հրեական հիվանդանոցում փորձարկման նպատակով տարեց անձանց առանց նրանց համաձայնության ներարկում էին քաղցկեղային ակտիվ բջիջներ: 1965-1971թթ. Նյու-Յորքի հիվանդանոցներում ֆիզիկական արատներ ունեցող երեխաների նկատմամբ իրականացվում էր հեպատիտ վիրուսի փորձարկումներ¹⁸:

Հակամարդկային փորձարկումներ իրականացվել են նաև խորհրդային պետությունում: Այսպես՝ 1926թ. պետական անվտանգության մարմիններում այնպիսի թույն արտադրելու աշխատանքներ էր իրականացվում, որը մարդու մարմնում հետքեր չէր

¹⁷ *Аполинская Н.В.* Биологические объекты человека в гражданском праве Российской Федерации. Автореф. дис. ... канд. филос. наук. Иркутск, 2009. С. 7.

¹⁸ *Силуянова И.В.* «Вызов биоэтики сегодня»: Католический симпозиум по биоэтике сегодня. Альфа и Омега. М., 1998. № 4 (18).

թողնում, ինչպես նաև՝ դեղամիջոցներ, որոնց ազդեցության ներքո մարդը կտար իրականությանը համապատասխանող ցուցմունքներ: Այս փորձարկումներն իրականացվում էին դատապարտյալների կամ նախնական կալանքի տակ գտնվող անձանց նկատմամբ:

«Նյուրնբերգյան օրենսգրքին» զուգահեռ՝ կարևորվեց նաև 1964թ. Բժշկական համաշխարհային միության ընդունած «Հելսինկյան հռչակագիրը»: Նշված փաստաթղթերի հիմնական տարբերությունն հետևյալն է. «Նյուրնբերգյան օրենսգրքը» թույլ չէր տալիս գիտական հետազոտություն իրականացնել այն մարդու նկատմամբ, ով այս կամ այն պատճառով զրկված էր համաձայնություն տալու հնարավորությունից: «Հելսինկյան հռչակագիրը» տարանջատում էր բուժվողի շահերից բխող ախտորոշիչ ու բուժական նպատակներ հետապնդող (կլինիկական կամ թերապևտիկ հետազոտությունները) և ախտորոշիչ նպատակներ չհետապնդող զուտ գիտական հետազոտությունները:

Բիոէթիկայի ոլորտում միջազգային փաստաթղթերից առանցքային նշանակություն ունի Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիան (Օվիդեոյի կոնվենցիա): Ի տարբերություն բժշկական հարցերին վերաբերող միջազգային այլ փաստաթղթերի՝ մասնավորապես «Հելսինկյան հռչակագրի», որոնք պարունակում են առավելապես դիսպոզիտիվ նորմեր, Մարդու իրավունքների և կենսաբժշկության կոնվենցիան պարունակում է պարտավորեցնող նորմեր:

Կոնվենցիայի հիմքում ընկած է այն գաղափարը, որ մարդու շահը գերակա է հասարակության և գիտության շահից: Կոնվենցիան արգելում է գենոտիպի հիման վրա ցանկացած խտրականություն, իսկ գենետիկ թեստերի իրականացումը թույլատրելի է միայն բժշկական նպատակներով. գենետիկ ինժեներիան թույլատրվում է կանխարգելիչ, ախտորոշիչ և թերապևտիկ նպատակներով և միայն այն դեպքում, եթե դրա արդյունքում չի փոխվի անհատի սերնդի գենոտիպը: Այն արգելում է բժշկական միջամտությամբ և տեխնիկայի կիրառմամբ որոշել ապագա պտղի սեռը՝ բացառությամբ ժառանգական հիվանդությունների փոխանցումը կանխարգելելու դեպքերի:

Կոնվենցիայի իմաստով այն երկրները, որոնք նախատեսում

են *in-vitro*¹⁹ հետազոտության հնարավորություն, պետք է արգելեն ուսումնասիրության նպատակներով մարդկային սաղմի ստեղծումը և ապահովեն վերջինիս համաչափ պաշտպանությունը: Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսվում է, որ առողջության բնագավառում ցանկացած միջամտություն կարող է իրականացվել բացառապես այն դեպքում, երբ անձը նախապես և համաչափորեն իրազեկվել է միջամտության ձևի, հետևանքների ու ռիսկերի մասին և միջամտության վերաբերյալ տվել է իր ազատ համաձայնությունը: Անձը ցանկացած պահի կարող է հրաժարվել իր համաձայնությունից: Եթե անձը, ելնելով իր կարգավիճակից, զրկված է համաձայնություն տալու հնարավորությունից (անչափահասներ, անգործունակներ և այլն), ապա բժշկական միջամտությունը թույլատրելի է, եթե այն ուղղակիորեն կհանգեցնի առողջության դրական փոփոխությունների:

Բիոիրավունքի համակարգը: Վերջին տարիների հասարակական հարաբերությունների արագընթաց զարգացումը վերափոխել է բժշկական էթիկայի մոնոդիսցիպլինար բնույթը, որտեղ գերակայում էր հայրավարությունը (*paternalism*)՝ ըստ որի բժշկի որոշումը բուժման լավագույն միջոցն է, հետևաբար հիվանդի համար ունի պարտադիր նշանակություն: Բժշկական տեխնոլոգիայի, մարդու իրավունքների գիտակցման և բարոյական նորմերի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն ծագեց բժշկական էթիկան դիտարկել ոչ միայն բացառապես բժշկագիտության տեսանկյունից, այլ նաև ուսումնասիրման առարկա դարձնել այլ գիտությունների համար, որով և պայմանավորվեց վերջինիս միջդիսցիպլինար բնույթը²⁰:

Բիոէթիկայի իրավագիտական ուսումնասիրությունը հանգեցրել է նոր եզրույթների, մասնավորապես բիո-իրավագիտության (լատ. *bios*-կյանք, *jurisprudentia*-իրավագիտություն) առաջացմանը (այսուհետ՝ կօգտագործվի «բիոիրավունք» հասկացությունը՝ որպես

¹⁹ *In-vitro*՝ լատիներեն նշանակում է «ապակու մեջ»: Բժշկագիտությունում այն օգտագործվում է որպես մարդկային վերարտադրության արտամարմնական ձև (*in vitro fertilization*):

²⁰ *Sperling D.* Law and Bioethics: A Rights-Based Relationship and Its Troubling Implications. The Hebrew University of Jerusalem. 2008, Vol. 11. PP. 52–78.

իրավաբանական գիտություն):

Հետխորհրդային տարածաշրջանում բիոիրավունքի հարցերի ուսումնասիրության նախակարապետները լեհ և ուկրաինացի իրավաբաններն են, մասնավորապես՝ Ռ. Տոկարչիկը, Ս. Ստեցենկոն և այլն, ովքեր ռոմանագերմանական իրավամտաճողությամբ հատուկ ձևաչափով ներկայացնում են բիոիրավունքի հասկացությունը, ուսումնասիրության առարկան և համակարգը:

Բիոիրավունքը նորագույն գիտաիրավական տեսություն է, որի հիմքում ընկած է մարդու կյանքի՝ որպես բիոսոցիալական արժեքի ընկալումը, և նպատակն է կենսաբանության և բժշկության ինտենսիվ զարգացման պայմաններում իրավական միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու կյանքը²¹:

Բիոիրավունքը՝ որպես գիտություն, կենսաբանության և իրավագիտության համադրման տիրույթում է, իսկ անուղղակի կերպով այն առնչվում է բիոտեխնոլոգիայի և կենսաբժշկության հետ: Հարկ է նշել, որ բիոիրավունքի ուսումնասիրման առարկան չի ընդգրկում բիոտեխնոլոգիայի և կենսաբժշկության բոլոր խնդիրները, այլ այն հարցերը, որոնք կապված են մարդու և նրա կյանքի հետ: Հաշվի առնելով մարդու բնական կյանքի միջամտությանն առնչվող հարաբերությունների վիճելի բնույթը՝ այդ հարցերի ուսումնասիրությունը պահանջում է նաև կրոնի, սովորույթների և բարոյական նորմերի վերաբերյալ խորը համեմատական գիտելիքներ, ինչպես նաև շրջահայացություն և հեռատեսություն, քանի որ խնդիրը կապված է ռիսկային փորձարարությունների և անկանխատեսելի հետևանքների հետ²²:

Հաշվի առնելով մարդկային կյանքի բնականոն ռիթմը՝ նախաձննդյան հայեցակարգից մինչև ծնունդ և մահ, առանձնացվում են բիոիրավունքի հետևյալ երեք ճյուղերը՝ բիոիրավական գենեզիս (Biojusgenesis), բիոիրավական թերապիա, (Biojustherapy), բիոիրա-

²¹ *Стеценко С.Г.* Біоюриспруденція як новий напрям правових наукових досліджень. Публічне право, № 3 (11) (2013), С. 260, *Мережко О.* Біоюриспруденція – новий напрям в сучасній науці права. Юридичний журнал. 2008. № 1 (67). С. 135.

²² *Tokarczyk R.* The subject matter of biojurisprudence and bio-law. http://www.roman-tokarczyk.pl/biojr_en/bio_en11.htm(23.01.2016).

վական տանատոլոգիա (Biojusthanatology)²³: Ուկրաինացի իրավագետներն առանձնացնում են բիոիրավունքի գրեթե նույնաբովանդակ երեք ուղղություններ՝ իրավական նախատանատոլոգիա, որը համապատասխանում է բիոիրավական գենեզիսին, իրավական սոմատոլոգիա, որը, որոշակի վերապահումներով, համապատասխանում է բիոիրավական թերապիային, և իրավական տանատոլոգիա²⁴: Համադրելով վերը նշված մոտեցումները՝ կարելի է առանձնացնել բիոիրավունքի՝ որպես իրավաբանական գիտության հետևյալ ենթաճյուղերը՝ իրավական նախատանատոլոգիա, իրավական սոմատոլոգիա և իրավական տանատոլոգիա:

Իրավական նախատանատոլոգիան ուսումնասիրում է կյանքի սկզբնական փուլը՝ պտղի ձևավորումից մինչև ծնունդն ընկած ժամանակահատվածի իրավական կարգավորման ենթակա հարցերը: Նախկինում իրավագիտությունը և օրենսդրությունը մարդկային պտղի իրավական պաշտպանության հարցերն ուսումնասիրում և կարգավորում էին դեռևս հռոմեական իրավունքում գործող «նացիտուրոս» (լատիներեն՝ nasciturus) իրավական ֆիկցիայի հիման վրա՝ որի համաձայն բեղմնավորված երեխայի շահերը դիտարկվում էին որպես ծնված երեխայի շահ: Նացիտուրոս իրավական ֆիկցիայի կիրառմամբ պտուղը համարվում էր արդեն ծնված, քանի որ խոսքը վերաբերում էր նրա շահին: Ներկայումս բեղմնավորման արհեստական միջամտության և մոդելա-

²³ Steinbock B. The Life before Birth: The Moral and Legal Status of Embryos and Fetuses, New York 1992, Tokarczyk R. The outline of the subject of biojurisprudence (part 1). Публічне право, № 3 (11) (2013). P. 243.

²⁴ Стеценко С.Г. Біоюриспруденція як новий напрям правових наукових досліджень. Публічне право № 3 (11) (2013), С. 261, Запорожченко А.О. Правовая танатология в системе общетеоретической юриспруденции. Jurnalul juridic national: teorie și practică. № 4, 2014. С. 12, Запорожченко А.О. Правовая танатология как новое научное направление. Актуальні проблеми держави і права, № 72 (2014). СС. 435–440: Որոշ ռուս իրավագետներ իրավական նախատանատոլոգիան և իրավական տանատոլոգիան դիտում են որպես իրավական սոմատոլոգիայի մաս: Սյու մասին տե՛ս Старовойтова О.Э. Юридический механизм реализации и защиты соматических прав человека и гражданина в Российской Федерации. Автореф. ... док. юрид. наук. Санкт-Петербург, 2006: Սույն հոդվածում իրավական սոմատոլոգիան և բիոիրավական թերապիան պայմանականորեն կդիտվեն որպես նույնաբովանդակ հասկացություններ:

վորման տեխնոլոգիաների զարգացման պայմաններում իրավական ֆիկցիան այլևս իր տեղը պետք է զիջեր բիոիրավունքի նորմերին, ինչը պայմանավորված է գենային տեխնոլոգիաների, բեղմնավորման և նախածննդյան ժամանակահատվածում իրակա-նացվող դիագնոստիկայի զարգացմամբ²⁵:

Իրավական նախատանատոլոգիայի առավել հասուն դրսևորումը ծնվելու իրավունքն է, որը որպես բիոիրավական ինստիտուտ, պետք է պտղի ձևավորումից մինչև երեխայի ծնունդն ընկած ժամանակահատվածում առկա հարաբերությունները կարգավորող և տարաբնույթ նորմատիվ ակտերում տարրալուծված իրավական նորմերը միավորի մեկ ամբողջական նորմատիվային համակարգում²⁶:

Իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է մարդու (կենդանու) մարմնին առնչվող այն հիմնահարցերը, որոնք անմիջականորեն կապված են կյանքի հետ՝ ծննդից մինչև մահ, մասնավորապես՝ օրգանների փոխպատվաստում (տրանսպլանտալոգիա), ստերջացում (ստերիլիզացիա) և ամլացում (կաստրացիա): Իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է նաև հոգեբուժության և սեռականության, մասնավորապես՝ սեռափոխության հարցերը²⁷: Այլ կերպ ասած՝ իրավական սոմատոլոգիան ուսումնասիրում է

²⁵ Tokarczyk R. The outline of the subject of biojurisprudence (part 1). Публічне право № 3 (11) (2013). P. 243.

²⁶ Մի շարք եվրոպական պետություններ Սահմանադրություններում ամրագրել են պտղի ձևավորման պահից մարդու կյանքի և արժանապատվության իրավունքի մասին դրույթներ: Օրինակ՝ Վենգրիայի նոր Սահմանադրության 2–րդ հոդվածում ամրագրված է, որ մարդու կյանքը պետք է պաշտպանվի պտղի ձևավորման պահից: Իռլանդիայի 01.06.1937թ. Սահմանադրության 40–րդ հոդվածում նույնպես ամրագրված է, որ պետությունը ճանաչում է չծնվածի կյանքի իրավունքը, և հավասարապես նկատի ունենալով մոր կյանքի իրավունքը՝ օրենքներով երաշխավորում է այդ իրավունքը: Մինչև ծնունդը կյանքի իրավունքի ճանաչման և սահմանադրական երաշխավորման հարցում մեծ ազդեցություն ունի կաթոլիկ եկեղեցին: *Пупинг Г., Пекорарио А.* Новая Венгерская Конституция (25 апреля 2011). Европейский Правовой Центр. 2011. С. 13.

²⁷ *Лаерик М.А.* К теории соматических прав человека. Сибирский Юридический Вестник. 2005. № 3: <http://law.edu.ru/doc/document.asp?docID=1229707> (23.01.2016).

մարդու սոմատիկ իրավունքների համակարգը և դրանց ճանաչման, պահպանման և պաշտպանության հիմնախնդիրները:

Իրավական սոմատոլոգիայի (կենսաիրավական թերապիայի) զարգացման միտումներից մեծ դժվարություններով նշմարվում է այն, որ կյանքի իրավունքը աստիճանաբար ընդլայնվում է՝ մարդու կյանքի իրավունքից վերաճելով կենդանիների կյանքի իրավունքի, ընդհուպ կենդանական աշխարհի բոլոր ներկայացուցիչների կյանքի իրավունքի²⁸:

Իրավական տանատոլոգիան ուսումնասիրում է կյանքի ավարտին վերաբերող հարցեր, մասնավորապես՝ կյանքի ավարտի կենսաբանական մոտեցումից տարբերվող մահվան տեսակները՝ կլինիկական, սոցիոլոգիական և ուղեղի մահ, հղիության արհեստական ընդհատում, ինքնասպանություն, էվթանազիա, մահապատիժ, այսինքն՝ այն ամենը, ինչ կապված է կյանքի ավարտի հետ:

Նշված ընդհանուր վերլուծությունից պարզ է դառնում, որ բիո-իրավունքի հիմքում ընկած են համապատասխանաբար՝ ծնվելու իրավունքը (իրավական նախատանատոլոգիա), կյանքը ու մարմինը տնօրինելու իրավունքը (իրավական սոմատոլոգիա) և մահվան իրավունքը (իրավական տանատոլոգիա):

²⁸ Tokarczyk R. The outline of the subject of biojurisprudence (part 1). Публічне право № 3 (11). (2013). P. 243.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԻՈԷԹԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ

Ս.Հ. Դավթյան

*Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական
համալսարանի հասարակագիտական առարկաների ամբիոն,
փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ,
«ՅՈՒՆԵՍԿՕ»-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղ,
վարիչ*

Մարդու արժանապատվության և իրավունքների մասին խոսելիս նկատի են առնվում երկու ասպեկտ.

– մարդն ունի իր նկատմամբ հարգալից վերաբերմունքի, աշխատելու, սովորելու և այլ իրավունքներ, և այդ շարքում՝ առաջնային հիմնարար իրավունքը նրա ապրելու իրավունքն է: Մարդու կյանքը սրբագործված է՝ սակրալ, անձեռնմխելի է, որն ամրագրված է նաև շատ երկրների, այդ թվում ՀՀ-ի Սահմանադրության մեջ և այս դրույթի անտեսումը, ոտնահարումը դիտվում է որպես մարդու իրավունքի ոտնահարում,

– մարդու կյանքի հետ գործ ունեցող մասնագետի՝ բժշկի իրավունքը՝ խախտելու մարդու, տվյալ դեպքում հիվանդի կյանքի սակրալ, սրբագործված, անձեռնմխելի լինելու իրավունքը: Այսինքն՝ իրավունք ունի արդյո՞ք բժիշկը խախտելու մարդու կյանքի իրավունքը, նրա կյանքի անձեռնմխելիությունը, թեկուզ հենվելով հիվանդի գրավոր կամ բանավոր համաձայնության վրա:

Ընդ որում՝ մարդու կյանքի իրավունքի ոտնահարումը ևս պետք է դիտարկել երկու ասպեկտով.

ա) մարդու կյանքի իրավունքի խախտում կամ ոտնահարում առանց նրա կամքի դրսևորման (հիշենք Քրիստիան Բեռնարի կազուսը. 1967թ. ունե՞ր բժիշկը իրավունք ոտնահարելու վթարի ենթարկված կնոջ կյանքի իրավունքը),

բ) կյանքի իրավունքի խախտում տվյալ հիվանդի գրավոր կամ բանավոր արտահայտած ցանկությամբ (հիշենք Գևորգ Գևորգյանի գործունեությունը):

Վերհիշելով «բժիշկ-մահ» Գ. Գևորգյանի ինքնապաշտպանա-

կան ճառն այն մասին, որ նա խախտել է մարդու կյանքի իրավունքը այդ մարդու՝ գրավոր համաձայնության հիման վրա, հարց է առաջանում. իրավունք ունե՞ր բժիշկը թեկուզ գրավոր խնդրանքի պայմաններում զրկել հիվանդին կյանքից:

Երրորդ՝ իսկ ինքը մարդը իրավունք ունի՞ իր սեփական կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարելու, խախտելու կյանքի սրբագործվածության, անձեռնմխելիության իրավունքը:

Ահա հարցերի մի շարք, որոնց լուծումը պահանջում է համատեղ ուժերի համախմբում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ից ստացած հրահանգների համաձայն՝ մեր նպատակը պետք է լինի ոչ միայն ուսանողներին, այլև հասարակության ամենալայն խավերին տեղեկացնել, իրազեկել բիոէթիկայի հիմնական սկզբունքների, նորմերի, հոշակագրերի, կոնվենցիաների բովանդակությունը:

Հումանիզմի գաղափարներն այսօր ներթափանցում են մարդկային և միջազգային համագործակցության բոլոր ոլորտները: Ինչպես նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության մեջ. մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը, արդարության, փոխադարձ հարգանքի զգացումները պետք է լայնորեն արմատավորել հասարակական գիտակցության մեջ: «Մարդու պատիվը, արժանապատվությունը պահելու համար հարկ է տարածել բարեկրթություն, կրթվածություն, հումանիստական մտածողություն, հասարակության բոլոր խավերի մեջ: Ըստ որում աշխարհը պետք է հենվի մարդկության ինտելեկտուալ և բարոյական միասնության վրա, գիտությունն ու բարոյականությունը չպետք է իրարից տարանջատվեն»: 1947թ. Նյուրնբերգյան ռազմական դատարանը (տրիբունալ) բացահայտեց մի պարզ բան, թե ինչքան անհուսալի, փխրուն ու թույլ են բոլոր էթիկական և իրավական արգելքները, որոնք իբր կոչված են պաշտպանելու մարդկանց կյանքը գիտության նվաճումներն կիրառումից¹:

Հիպոկրատեսի երդումը բոլորովին էլ արգելք չհանդիսացավ նացիստական բժիշկների համար, երբ անցկացնում էին փոր-

¹ Davtyan S., Aslanyan G. Ethical Review System for Biomedical Research in the Republic of Armenia (Historical and Cultural Background, Legal Regulations, Education in Bioethics, Perspectives and forms of International Cooperation), in Ethical Review of Biomedical Research in CIS Countries (Social and Cultural Aspects), 2007, St. Petersburg. PP. 99–118.

ձարկումներ (գիտափորձեր) դատապարտյալների մասնակցությամբ: Նյութներեզյան կողքքսի սկզբունքային պահանջներից մեկն էլ դարձավ այն, որ արգելվեց առանց մարդու ինքնակամ գրավոր համաձայնության (իրազեկված, տեղեկացված համաձայնության) դարձնել նրան գիտափորձերի, փորձարկումների առարկա կամ մասնակից:

Առ այսօր լարված, դրամատիկ իրադարձություններ են ծագում Երկիր մոլորակի այս կամ այն հատվածում: Ահա մարդկության դրամատիկ կամ նույնիսկ ողբերգական ճակատագրի փիլիսոփայական վերլուծությունը ստիպեց ոչ միայն փիլիսոփաներին, այլև բժիշկներին, կենսաբաններին, քաղաքագետներին, իրավաբաններին, աստվածաբաններին խոսել մարդկության հավանական ինքնասպանության, վերջի մասին:

Մրան զուգահեռ անհրաժեշտություն զգացվեց բարոյափիլիսոփայական վերախմաստավորման ենթարկել գիտության և տեխնիկայի առաջադիմական թվացող ձեռքբերումները, նորագույն տեխնոլոգիաները, այդ թվում կենսաբանության և բժշկության մեջ: Փիլիսոփայորեն մտածող որոշ բժիշկ մասնագետներ նույնիսկ վախ արտահայտեցին այն մասին, որ իրենց հայտնագործությունների ներդրումը կարող է արագացնել երկրի կենսոլորտի կործանումը և մարդկային բանականության կատաստրոֆան:

Մարդկության գլխին այսօր կախված է նաև բիոտեռորիզմի վտանգը, որի գործիք կարող են լինել գենետիկորեն փոփոխված բակտերիաները, որոնք կայուն են դեղորայքի ազդեցության նկատմամբ, նաև պրեպարատներ, որոնք կարող են ջնջել մարդու հիշողությունը: Անհանգստություն է պատճառում ոչ միայն այն, թե ինչ կարող են մեզ հետ անել այլ մարդիկ, այլ նաև այն, թե ինչ կարող ենք անել մենք ինքներս մեզ հետ, խախտելով մեր իրավունքները և արժանապատվությունը:

Գիտական բժշկության մեջ բիոթիկայի հումանիստական գաղափարների ներդրման նպատակն է գիտնականների մոտ արթնացնել «մասնագետի խիղճը», խիղճ, որ ետ կպահի իրենց գենային ինժեներիայի մեթոդներով կենդանիների և բույսերի նոր տեսակների և առավել ևս ու առաջին հերթին կլոնավորման մեթոդներով մարդ ստեղծելու անհեռատես փորձերից:

Եթե հասարակական գիտակցության մեջ ամրապնդվեն բիո-էթիկայի հումանիստական գաղափարները, ապա դա թույլ կտա լուծել բարդ հարցերի մի հսկայական կծիկ, որ առաջանում է «մեղքով»: Գիտնականներ, որոնք երբեմն բարոյական տեսակետից խիստ կասկածելի գործողություններով մարդկային քաղաքակրթությունը կանգնեցնում են անդունդի եզրին, ավելին, հանգեցնում են մարդկության հնարավոր ոչնչացմանն ու վերացմանը: Ահա թե ինչու է այդքան կարևոր ու անհրաժեշտ ձևավորել բժիշկ գիտնականների բարոյափիլիսոփայական ինքնագիտակցությունը²:

Մարդու իրավունքներն ընկալվում են որպես անբաժան, հիմնարար իրավունքներ, որոնք ի ծնե ունի յուրաքանչյուր մարդ այն պարզ պատճառով, որ նա մարդ է: Այս իրավունքները (խոսքի ազատության իրավունքը, կյանքի իրավունքը, կոտանքների չենթարկվելու իրավունքը, ինքնորոշման իրավունքը և այլն) գործում են անկախ մարդու տարիքից, սեռից, ծագումից, ազգությունից, համոզմունքից և այլն:

Սովորաբար մարդու իրավունքները լինում են 3 տիպի՝

ա) քաղաքական և քաղաքացիական իրավունքներ՝ կրոնի, համոզմունքի իրավունքը, խոսքի ազատության իրավունքը և այլն,
բ) մշակութային, սոցիալական, տնտեսական իրավունքներ՝ աշխատանքի, կրթության, սննդի, ապաստանի և այլն:

Վերոնշյալ բոլոր իրավունքներն ամրագրվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ 1948թ.:

գ) հավաքական իրավունքներ, որոնք սկսել են ամրագրվել 1970-ականների ապագադրությաման շրջանում, երբ Աֆրիկայի ու Ասիայի շատ գաղութներ պահանջեցին իրենց բնական ռեսուրսները ինքնիշխան տնօրինելու, ինքնորոշման իրավունքներ:

1941թ. Ֆրանկլին Ռուզվելտն իր «Երկրի իրավիճակի մասին» ելույթում կոչ արեց պահպանել չորս անհրաժեշտ ազատությունները, որոնք են՝ ազատություն վախից, ազատություն կարիքներից, խոսքի ազատություն և խղճի ազատություն: Մա նոր խթան հանդիսացավ մարդու իրավունքների՝ որպես խաղաղության և պատերազմի ավարտի պայմանի զարգացման համար:

Երբ հասարակությանը հայտնի դարձան նացիստական Գերմանիայում իրականացվող վայրագությունները, պարզ դարձավ,

² Биоэтика: вопросы и ответы // Под ред. Б.Г. Юдина и П.Д. Тищенко. М., 2003.

որ ՄԱԿ-ի կանոնադրությունը բավարար չի սահմանում մարդու իրավունքները: Անհրաժեշտ եղավ ստեղծել համընդհանուր հռչակագիր, որը կթվարկեր և կներկայացներ մարդու բոլոր իրավունքները. «Կառավարություններն իրենց և իրենց ժողովուրդների վրա մեծ պատասխանատվություն են դնում, ինչն ապահովում է հռչակագրում նշված մարդու իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը»:

Մակայն իսլամական երկրները (Սուդան, Պակիստան, Իրան, Մաուդիան Արաբիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Քաթար) քննադատել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ստեղծել իրենցը՝ Կահիրեի հռչակագիրը, նշելով, որ իրենց կառավարությունները հիմնված են Շարիաթի վրա. «Հրեաքրիստոնեական ավանդույթների աշխարհիկ փոխըմբռնումն է դա», ինչը չի կարող իրականացվել մահմեդականների կողմից՝ առանց խախտելու իսլամական օրենքը:

Բիոէթիկայի գոյության առաջին 50 տարիների ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը և նրան ենթակա ազգային մասնաճյուղերի (այդ թվում հայաստանյան) վարիչները քննարկում էին նրա ծագման, զարգացման հայեցակարգերը, մոտեցումները: Այդ հրաշալի, օգտաշատ գաղափարը կամաց-կամաց ձևավորեց իր սկզբունքներն ու հայեցակարգերը և ունեցավ իր հետևորդները աշխարհի բոլոր մասերում:

Այսօր մենք երկրորդ էտապում ենք: Այժմ դեմ առ դեմ կանգնած ենք մեկ ուրիշ խնդրի առջև, խնդիր, որը, թվում է, ավելի կարևոր, ավելի էական, դժվար լուծելի է, քան առաջին էտապի խնդիրները՝ ներարկել մարդկանց կյանքի և առօրյա վարքագծի մեջ բարոյական արժեքներ, ներշնչել մարդկանց ունենալու այդ բարոյական արժեքներն իրենց **հոգում**, ո՛չ միայն վարքագծում, առօրյա կենսագործունեության մեջ³:

Մեր այս նպատակները կամ խնդիրները կարող է և պետք է իրագործվեն երկու տարբեր միջոցներով. կրթական և իրավական:

Առաջին կրթական ուղին պետք է ներառի դասավանդման նոր, արդյունավետ մեթոդների օգտագործում, որը պետք է հնարավորություն տա մեզ թափանցելու պոստենցիալ սպառողների

³ “Book of Abstracts” of UNESCO Chair in Bioethics 11-th World Conference: Bioethics, Medical Ethics and Health Law, 2015 Naples, Italy. P. 51.

(ուսանողներ, առողջապահության աշխատակիցներ, հիվանդներ և, ընդհանրապես, հասարակության ամենալայն խավեր) գիտակցության, ուղեղի, մտքի և հոգու մեջ⁴: Այսօր միայն վերբալ ճանապարհով դասախոսություն կարողալը պարզապես անթույլատրելի պետք է համարել, քանի որ շատ ավելի արդյունագոր է բիոէթիկական հիմնահարցերը տեղ հասցնել տարբեր «գերային խաղերի», իրադրության վերլուծությունների (case study), էքսպերտ խմբերի, բանավեճերի, համապատասխան ֆիլմերի և ներկայացումների դիտումով ու քննարկումով (մի բան, որ մենք կիրառել ենք մեր մանկավարժական գործունեության առաջին իսկ տարիներից, և որոնց մասին ընդգծված նշվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային գիտաժողովներում)⁵:

Կուզենայի նկատի առնել մի փոքր դիտարկում. ողջունում եմ իրավաբանների այս քայլը և մտածողությունը, որ պետք է տեղի ունենա նաև բիոէթիկայի և իրավաբանության մերձեցում: Ողջունելի է, որ վերջապես իրավաբանները ևս մոտեցան բիոէթիկայի հարցերին և կարևորեցին համագործակցությունը մեզ հետ: Մաժամանակի հրամայականն է և մենք պետք է համախմբենք մեր ուժերը մեր առջև դրած խնդիրները լուծելու համար:

Նշեմ նաև, որ խնդրի կարևորությունն ընդգծվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի վերջին երեք համաշխարհային գիտաժողովներում, երբ կոնֆերանսի վերնագրում սկսեց երևալ առողջապահական կամ բժշկական իրավունք (health law) հասկացությունը:

Բոլորիս է հայտնի, որ բիոէթիկական միջգիտակարգային գիտաճյուղ է և մասնագիտական տարբեր ոլորտների մասնագետների երկխոսությունների հիանալի դաշտ է փիլիսոփաների ու բժիշկների, սոցիոլոգների ու կենսաբանների, հոգեբանների ու էկոլոգների, իրավաբանների, աստվածաբանների ու զենետիկների միջև:

Եվ իսկապես չկա մի հիմնախնդիր բիոէթիկայի մեջ, որ լիարժեք լուծում ունենա առանց այդ մասնագետների համագործակցության: Ավելին՝ պահանջվում է ոչ միայն տարբեր մասնագիտու-

⁴ Informed Consent. Editor: Amnon Carmi, Israel, 2003.

⁵ Bioethics Education: Contents, Methods, Trends. Book of Abstracts. Zefat, Israel, 2010. P 34.

Classroom Communication. Use of Emotional Intelligence and Non-Verbal Communication in Ethics Education at Medical Schools. 2005, Israel, Haifa.

թյան տեր մասնագետների ուժերի համախմբում, այլև տվյալ ժողովրդի հոգեբանության, հոգեկերտվածքի, ազգային ավանդույթների, սովորույթների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական այն իրավիճակի հաշվառում, որի մեջ գտնվում կամ հայտնվել է տվյալ ժողովուրդը⁶:

ՀՀ-ում բիոէթիկայի գաղափարները կրթական համակարգում, ուսանողների, բուժաշխատողների և ընդհանրապես հասարակական գիտակցության մեջ ներարկելու առաջին փորձը իրականացրել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը: 1999թ. ԵՊԲՀ ռեկտոր, ակադեմիկոս Վ.Պ. Հակոբյանի առաջարկով և հանձնարարությամբ կազմվեց առարկայի դասավանդման պլան և ծրագիր, իսկ 2000թ.-ից այն դասավանդվում է բժշկական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսանողներին, օրդինատորներին, անհրաժեշտության դեպքում պարբերաբար կրտսեր և միջին բուժանձնակազմին, ասպիրանտ-հայտորդներին:

Եվ այսպես, Հայաստանում բիոէթիկայի հարցերին առաջինն ուշադրություն դարձրեցին փիլիսոփաները. 2009թ. հրատարակվեց մայրենի լեզվով առաջին «Բիոէթիկա» դասագիրքը, որը ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորվեց որպես դասագիրք բժշկական բուհերի ուսանողների համար, «Биоэтика» և “Bioethics” ուսումնական ձեռնարկները ռուսալեզու և անգլալեզու այլազգի ուսանողների համար: 2012-ին հրատարակվեց «Բիոէթիկայի ներածություն» մենագրությունը և ավելի քան 35 հոդված, որից 21-ը՝ արտասահմանում (Իսրայել, Ռուսաստան, Բելառուս, Մոլդովա, Սինգապուր, Իտալիա և այլն):

Երկրորդը բիոէթիկայի հարցերին ուշադրություն դարձրեց Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտը՝ հրատարակելով «Կենսաէթիկայի ներածություն» աշխատությունն Աննա Բոյաջյանի խմբագրությամբ և Լյուդմիլա Ներսեսովայի և այլոց հեղինակությամբ:

Երրորդը բիոէթիկայի հիմնահարցերին անդրադարձան Էջմիածնի Գևորգյան ճեմարանի աստվածաբանները (Գևորգ սրբա-

⁶ Davtyan S. “The Traditions, Customs, Mentality, Culture and Problem of Euthanasia in Armenia” in Materials of 2nd International Scientific Conference on Ethics Education in Medical Schools, Israel, Eilat. P. 10.

զան Սարոյանի, Հրաչ սարկավազի և այլոց ջանքերով), լույս ընծայելով կենսաէթիկայի վերաբերյալ ուսումնասօժանդակ ձեռնարկ:

Այսօր ողջունելի է այն, որ իրավաբանների կողմից է փորձ արվում դիտարկել բիոէթիկայի հիմնահարցերը: Այս առումով կոնկրետ օրինակ կարելի է համարել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված «Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը: Այն ներառում է 15 էթիկական սկզբունք, որոնք ընդունվել են աշխարհի բոլոր պետությունների կողմից: Առաջին սկզբունքը հենց վերաբերում է մարդու արժանապատվությանը և իրավունքներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնը և նրան ենթակա ազգային մասնաձյուղերը (այդ թվում՝ հայկականը) իրավասու են և պարտավորվում են տարածել հռչակագրի գաղափարները, սկզբունքները աշխարհի բոլոր անկյունների ուսանողներին: Առաջին քայլն արված է. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաձյուղի և ԵՊԲՀ ջանքերով հրատարակվել են վերոնշյալ աշխատանքները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» հռչակագիրը, ընդունված 2005թ. հոկտեմբերին, նշում է. Բիոէթիկայի պատմության մեջ առաջին անգամ ՄԱԿ-ի անդամ պետությունները և միջազգային հանրությունը պարտավորվեցին մեկ միասնական համատեքստում հարգել և իրագործել փաստաթղթում հռչակած Բիոէթիկայի հիմնական սկզբունքները: Հռչակագիրը վերաբերում է բժշկության, կյանքի մասին գիտությունների և դրանց առնչվող տեխնոլոգիաների բարոյագիտական հարցերին, առաջնորդվելով այն սկզբունքներով, որոնք ապահովում են մարդու արժանապատվության և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք: Հռչակագիրը դրանով իսկ հաստատում է մարդու իրավունքների և էթիկական նորմերի փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

2008թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտության և տեխնոլոգիաների էթիկայի բաժանմունքը (վարիչ՝ Հենկ Տեն Հավե) մշակեց և ներկայացրեց Բիոէթիկայի ուսումնական ծրագիր:

2010թ. նոյեմբերի 23-ին Համաձայնագիր (Մեմորանդում) կնքվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Դ. Բադարյ) և ԵրՊԲՀ-ի (Մ. Դավթյան) միջև:

Մինչ ԵրՊԲՀ-ի հետ համաձայնագիր կնքելը ՅՈՒՆԵՍԿՕ-ն

համաձայնագիր էր կնքել Մոսկվայի, Կազանի և Մինսկի համալսարանների հետ, ելնելով այն հանգամանքից, որ այստեղ աշխատում են միջազգային ճանաչում ունեցող, դասագրքեր հրատարակած փորձագետներ, որոնք պետք է իրականացնեն հիշյալ ծրագրի փորձարկումը: Այսպիսով, հետխորհրդային տարածքում չորրորդ համաձայնագիրը կնքվեց Հայաստանի ԵրՊԲՀ-ի հետ: Լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի միջազգային ցանցի հայկական մասնաճյուղի վարիչ և կնքելով համաձայնագիր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, պարտավորված էի ներկայացնելու սույն հոդվածը, որում ամփոփված են Հոչակագրի սկզբունքներին, դրանց ուսումնասիրման նպատակներին վերաբերող դատողություններ:

Սույն հոդվածը հոչակագրի նպատակների իրագործման միջոցներից մեկն է, որն առաջարկում է մարդկանց օգտվել գիտության ու տեխնիկայի նվաճումներից միայն այն դեպքում, երբ հարգվում են մարդու արժանապատվությունն ու իրավունքները:

**ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մ.Հ. Մուրադյան

*ՀՀ ռստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի պետ, իրավաբանական գիտությունների դոցենտ*

Արժանապատվության էության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ դրանք գլխավորապես կարելի է բաժանել երկու ուղղությունների: Առաջինն արժանապատվության բնահրավական մոտեցումն է, որի պարագայում մարդու արժանապատվությունը բնությունից տրված արժեք է, որն ամփոփված է բնական իրավունքի քրիստոնեական ուսմունքում և Կանտի փիլիսոփայության մեջ: Երկրորդ մոտեցման կողմնակիցներն արժանապատվությունը կապում են մարդու անհատականության հետ, այսինքն յուրաքանչյուր դեպքում արժանապատվության գնահատման չափանիշները տարբեր են: Այս տեսությունն ընդունված է անվանել «արժանապատվության ձեռքբերման տեսություն», որի պարագայում մարդու արժանապատվությունը ձևավորվում է սեփական ինքնորոշ վարքագծի հիման վրա, ինչի արդյունքում պարզ է դառնում, որ անհատն է որոշում իր արժանապատվության ծավալն ու բովանդակությունը¹:

Կախված հասարակարգից, արժանապատվության վերաբերյալ պատկերացումներն եղել են փոփոխական:

Նոր զարգացող իրավունքի անտրոպոլոգիայի ((legal anthropology) կամ (anthropology of Law)) ոլորտի մասնագետները գտնում են, որ արժանապատվության գաղափարի վերաբերյալ պատկերացումները գոյություն են ունեցել նաև նախապետական հասա-

¹ *Հովհաննիսյան Գ.* Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք, էջ. 6, Pieroth/Schlink: Grundrechte, Staatsrecht II, Heidelberg, 2007, S. 81. Nipperdey: Die Grundrechte, Bd. II, 1954, S. 1. Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 96.

րակությունում²: Նշվում է, որ նախապետական հասարակությունում արժանապատվության կարևորման հատկանիշներից էր ցեղի անդամների և օտարների միջև դրվող տարբերությունը:

Ստրկատիրական հասարակարգում արժանապատվության վերաբերյալ գաղափարների ձևավորումը կախված է եղել այն հանգամանքից, թե ովքեր են իրականացնում պետական իշխանությունը: Այսպես, Աթենքում ամենաբարձրը հարուստների արժանապատվությունն էր³: Սպարտայում այդ մակարդակին հավակնում էին լավագույն զինվորները⁴:

Պատմական տարբեր ժամանակահատվածներում հետազոտողների աշխատություններում արժանապատվության խնդիրը լուծում է ստացել տարբեր կերպ, որն առանձին դեպքերում ոչ մի ընդհանրություն չունի մարդկային արժանապատվության ժամանակակից առաջադեմ ընկալումների հետ: Օրինակ, Պլատոնի էլիտայի տեսության համաձայն արժանապատվությունը կապված էր սոցիալական ստրատիֆիկացիայի⁵ հետ՝ հիմքում դնելով հատկապես մարդկանց հոգեբանությունը, որոնց նա բաժանում էր ընտրյալների (aristos) և ծառաների վերջիններիս անվանելով ամբոխ կամ մասաներ: Իր հիմնարար աշխատություններից մեկում (Պետություն) Պլատոնը նշում է, որ ամբոխը չի կարող ունենալ արժանապատվություն, այդ իսկ պատճառով և ոչ մի արժեք չի ներկայացնում ընտրյալների համար⁶:

Ի տարբերություն պլատոնյան իրավընկալման, ժամանակակից գիտնական Զիրբերքուլը, հիմք ընդունելով դատական պրակտիկան, ընգծում է, որ Գերմանիայի հրեաները, որպես մեկ միա-

² Pospisil L. Anthropology of Law // A Comparative Theory. У N. Y. 1971; Roberts S. Order and Dispute: Introduction in Legal Anthropology L. 1979., Семенов Ю.И. Формы общественной воли в доклассовом обществе: табуитет, мораль и обычное право // Этнографическое обозрение 1997. № 4. СС. 5–6. Ковалевский М.М. Обособление дозволенных и недозволенных действий // Новые идеи в социологии. Сб. 4. СПб. 1913. С. 90.

³ История государства и права зарубежных стран. Часть 1. Учебник для вузов. Под ред. проф. Крашенинниковой Н.А и проф. Жидкова О. А М.: Издательская группа НОРМА - ИНФРА. М, 1998. С. 134.

⁴ Плутарх. Сравнительные жизнеописания. в 3-х томах. Т.1, М.: Изд-во Академии Наук СССР, 1961. С. 57–61.

⁵ Հասարակության բաժանումը հատուկ շերտերի /ստրկատների/ <https://ru.wikipedia.org/wiki/8.09.2015/>.

⁶ Платон. Собранные сочинений. Т.4. М., Мысль, 1994. С. 744.

վոր, կարող են ունենալ արժանապատվության իրավունք⁷: Ազգային տեսակի արժանապատվության իրավունքի մասին ՄԻԵԴ-ը նշել է նաև Փերիչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործի շրջանակներում՝ ընդձելով որ հայերը և նրանց նախնիներն (ազգային տեսակ, ովքեր վերապրել են ցեղասպանությունը և հայերը, ովքեր ունեն այդ իրավունքը հարգելու պահանջի իրավունք) ունեն արժանապատվության իրավունք⁸:

Ամփոփելով արժանապատվության վերաբերյալ պլատոնյան հայացքները, անհրաժեշտ է նշել, որ հեղինակն առանձնացնում էր հետևյալ տեսակները՝

1. բնական՝ ծնունդով ձեռք բերված արժանապատվություն,
2. արժանապատվություն, որ ձեռք է բերվում կրթության արդյունքում,
3. արժանապատվություն, որը դաստիարակության արդյունք է ⁹:

Արիստոտելը ևս իր հայտնի տրակտատներում (Նիկոմախյան էթիկա, Եվդեմական էթիկա և Մեծ էթիկա¹⁰) առաքինությունը դիտարկում է որպես մարդուն բնութագրական որակ և յուրաքանչյուրը պետք է իր աշխատանքով, կրթությամբ և դաստիարակությամբ ձգտի դրան: Արիստոտելյան դիտարկումների համաձայն մարդն ընդամենը ունի բնությունից տրված հնարավորություն, որը հետագայում վեր է ածվում իրականության¹¹: Արիստոտելն արդարության և առաքինության տեսությունն անվանեց «քաղաքականություն», իսկ «էթիկա» եզրույթը շրջանառության մեջ դրվեց նրա աշակերտների կողմից¹²:

Արժանապատվության գնահատումը, կախված սոցիալական խմբից, առաջինը կարևորվում է Արիստոտելի աշխատություններում: Մասնավորապես, փիլիսոփան նշում է, որ մեծ մարդիկ

⁷ Pieroth/Silberkuhl (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 263.

⁸ Case of Perinçek v. Switzerland (Application no.27510/08) կետ 156,227: [http://hudoc.echr.coe.int/eng?i=001139276#{"display": \["0"\], "languageisocode": \["ENG"\], "appno": \["27510/08"\], "itemid": \["001-158235"\]}](http://hudoc.echr.coe.int/eng?i=001139276#{) (20.12.2015).

⁹ Ricken F. Platonismus und Pragmatismus. Eine interpretation von Platon: «Politeia» // Theologia und Philosophie Freiburg etc., 1995. Jg.70, H.4. S. 481–493.

¹⁰ Մանրամասն տե՛ս՝ Kenny A. The Aristotelian Ethics. A Study of the Relations between the Eudemian and Nicomachean Ethics of Aristotle. Oxf., 1978.

¹¹ *Аристотель. Этика. Политика. Риторика. Поэтика. Категории / Аристотель.* Мн.: Литература, 1998. С. 167.

¹² Տե՛ս նույն տեղում՝ էջ 158:

պահանջում են իրենց արժանապատվությանը համարժեք պատիվ և փառք¹³: Այն եզրույթները, որոնք Արիստոտելն օգտագործում էր արժանապատվության մասին խոսելիս, ըստ նրա, պայմանավորված չէին մարդու բնական վիճակի հետ և ձեռք էին բերվում կրթության, դաստիարակության ընթացքում: Այս ամենը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ մտածողության արիստոտելյան փուլում մարդկանց համար առավել կարևոր էր հասարակական, քան՝ պետական գնահատականը: Մարդկանց վարքի հասարակական նորմատիվներն առաջնային դիրք էին զբաղեցնում:

Մարդու արժանապատվության վերաբերյալ պատկերացումները զարգացել են «պատիվ», «հարգանք» հասկացությունների հետ զուգահեռ: Մրանք եզրույթներ են, որոնք տարբեր հարթություններում կոնկրետացնում են արժանապատվության մասշտաբը: Այս իմաստով, նշված հասկացություններն առավել լայն եզրույթի՝ արժանապատվության մասշտաբը գնահատող տարբեր են¹⁴:

Պլատոնաարիստոտելյան տեսանկյունից դիտարկելով արժանապատվություն եզրույթի հասկացությային ապարատը՝ չի կարելի չհամաձայնվել իրավաբանական գրականության մեջ առկա այն տեսակետի հետ, որ փիլիսոփաների դատողությունները քննարկվող հիմնախնդրի վերաբերությամբ առավելապես վերաբերվել են մարդու կողմից իր որակների ինքնագնահատականին՝ անտեսելով հիմնախնդրի իրավական ասպեկտները¹⁵:

Թոմա Ակվինացու գնահատմամբ յուրաքանչյուրի, հասարակության շահը որոշակիացվում է Աստվածային դիտավորությամբ (մտադրությամբ), և մարդու կողմից Աստվածային կանոնների խախտումն արարք է՝ ուղղված հենց մարդու շահի դեմ: Ակվինացին արժանապատվությունը սահմանափակում էր խղճով՝ որպես անարդար օրենքին հակադրվող արժեք¹⁶: Քննարկվող ենթատեսքստում ժամանակակից իրավընկալումներին առավել մոտ Ակվինացու դիրքորոշումը հենված էր բնաիրավական տեսության ան-

¹³ Տե՛ս նույն տեղում՝ էջ 230–231:

¹⁴ Дробницкий О.Г. АН СССР, Ин-т философии. М.: Наука, 1977. С. 65.

¹⁵ Штанько И.Н. Достоинство личности как правовое явление: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Владимир, 2006. СС. 22–23.

¹⁶ Бандуровский К.В. Проблемы этики в «Сумме теологии» Фомы Аквинского // Вопросы философии. 1997. № 9, С. 156.

տիկ հայացքների վրա՝ ինչն էլ հիմք էր հանդիսանում պնդել, որ պետության նպատակը մարդկանց համար կյանքի արժանավայել պայմանների ստեղծումն է, ինչի պայմաններում, մարդու արժանապատվության իրավունքը գնահատվում էր որպես աստվածային ծագմամբ մարդուն տրված բնական արժեք¹⁷:

Մարդու անհատականության արժևորման տեսանկյունից էապես կարևորվում է նաև Բ. Մպինոզայի այն դիրքորոշումը, որ դավանանքը, դրա ազատությունը պետության գոյության անհրաժեշտ նախադրյալներ են, և նման պետություններում օրենքները հանդիսանում են ոչ թե կառավարչի, այլ՝ մարդու շահը: Հետևաբար մարդիկ, ովքեր հետևում են օրենքներին, դադարում են կամազուրկ ստրուկներ լինելուց, այլ սեփական կամքով շարժվող հպատակներ են¹⁸:

Անհատ-պետություն հարաբերությունների որոշակիացման հարցում արժեքավոր պետք է համարել Ջ. Լոկկի այն դիտարկումը, որ պետության հիմքում ընկած են տարաբնույթ անձնային շահերը, իսկ օրենքի նպատակը պետք է լինի ոչ թե ոչնչացնելը և (կամ) սահմանափակելը մարդու իրավունքները, այլ դրանց պահպանումը և ընդլայնումը: Ըստ հեղինակավոր տեսաբանի, մարդու ազատությունն առկա է այն պարագայում, երբ յուրաքանչյուրը կճանաչվի որպես սեփական անհատականության կրող¹⁹: Հեղինակն արժանապատվության գոյությունը կապում էր կյանքի, ազատության և սեփականության իրավունքների հետ²⁰:

Ժամ Ժակ Ռուսոն ևս արժանապատվությունը կապում էր մարդու ազատության հետ՝ սակայն ընդգծելով, որ մարդիկ կորցրեցին այդ ազատությունն անազատության և սեփականության առաջացման հետ: Հեղինակը համոզված էր, որ ազատությունն առանց օրենքի չի կարող լինել: Վերլուծելով հեղինակի դատողություններն անհրաժեշտ է նշել, որ խոսքն այս պարագայում գնում է ոչ թե

¹⁷ *Пожарова Л.А.* Гарантии охраны достоинства личности в условиях реформирования современного российского общества и государства. Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Белгород, 2014. С. 22.

¹⁸ *Спиноза Б.* Богословско-политический трактат. СС. 207–208 http://www.civis-book.ru/files/File/Spinoza_B-P_tr.pdf. /20.12.2015/.

¹⁹ *Локк Дж.* Избранные философские произведения. В 2-х томах. Т 2, 1960, С. 28.

²⁰ *Пожарова Л.А.* Гарантии охраны достоинства личности в условиях реформирования современного российского общества и государства. Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Белгород, 2014. С. 25–26.

պոզիտիվ իրավունքի, այլ բնական օրենքների մասին: Այս իմաստով հնարավոր չէ չհամաձայնել Ռուսոյի այն դիտարկման հետ, որ արժանապատվությունն այն կարևոր արժեքն է, որը հնարավորություն է ընձեռնում անհատին ենթարկվել, բայց չճառայել, նրան դեկավարում են, բայց նա չունի տեր, նա ենթարկվում է միայն օրենքների, և այդ տրամաբանությամբ էլ չի ենթարկվում մարդկանց²¹:

Հեգելի բնորոշմամբ մարդու արժանապատվությունը ձևավորվում է ինչպես անհատների, այնպես էլ պետության կողմից մարդու նկատմամբ ունեցած հարգանքի դրսևորմամբ: Հեգելը ևս գտնում էր, որ մարդու արժանապատվությունը պայմանավորված է վերջինիս ազատությամբ, որը հնարավորություն է տալիս վերացարկվել ներքին և արտաքին խնդիրներից՝ հնարավորություն ընձեռնելով անհատին հասկանալ իր իրական առաքելությունը²²:

Անտրոպոլոգիական փիլիսոփայության ռուս հեղինակները գտնում էին, որ անհատի արժանապատվությունը ճակատագրական կախվածության մեջ էր գտնվում հասարակությունից, ինչի արդյունքում անհետանում էր վերջինիս անհատական բնույթը՝ կլանվելով ինքնակառավարվող սոցիալական խմբերի կողմից: Նման իրավիճակում մարդը դադարում է արժևորել ինքն իրեն՝ հույսը դնելով հասարակական գնահատականի վրա: Սակայն արժանապատվության համար որպես հենարան պետք է և անհրաժեշտ է դիտարկել մարդու զգացումը՝ իր և իր ճակատագրի համար: Մարդու արժանապատվությունը վերջինիս կյանքի ընթացքում, և ոչ թե մահվան, հոգու և մարմնի միավորումն է, այլ ոչ թե մարմնից հոգու առանձնացումը²³:

Ռուս հեղինակ Վ.Ս. Սոլովյովի գնահատմամբ մարդու արժանապատվության հիմնական չափանիշներից է ընտրության ազատությունը: Ըստ հեղինակի, անհատի մտքի և գործողությունների ազատությունը ձևական է և ապահովում է մարդու արժանապատվությունը բարոյական հասարակությունում²⁴:

²¹ Руссо Ж.-Ж. Трактаты. М. 1969. С. 451.

²² Гегель Г.В. Сочинения. Энциклопедия философских наук: Философия духа, русский, перевод с немецкого, Т. 3. М., 1956. С. 222.

²³ Մանրամասն տես՝ Философия свободы. М.: Путь, 1911. 281 с. (Клепинина, № 5) (Часть вторая, глава V. Происхождение зла и смысл истории. О третьем завете и его связи со смыслом истории) Переиздания: 1994; 1998; http://krotov.info/library/02_b/ber_dyaev/1911_05_05e.html#123/07.10.2015/.

²⁴ Соловьев В.С. Оправдание добра. Соч. В 2-х томах. М., 1998, Т. 1, С. 130.

Տրամաբանական է, հեղինակի կատարած հետազոտությունը, չունենալով իրավաբանական ուղղվածություն, անդրադարձ չի կատարել հիմնահարցի իրավական ասպեկտներին: Կարծում ենք, անկախ այն հանգամանքից, արժանապատվությունը գնահատենք բնական, թե՛ դաստիարակության կամ կրթության արդյունքում ձեռք բերված արժեք, այն, որ պոզիտիվ իրավունքն այստեղ ունի անելիքներ՝ արժանապատվության՝ որպես իրավական օբյեկտիվ արժեքի և ինքնուրույն սուբյեկտիվ իրավունքի ճանաչման և դրա պաշտպանության երաշխիքների սահմանման իմաստով, կասկած չի հարուցում:

Պատահական չէ, որ նույնիսկ փիլիսոփայության ոլորտի գրականության մեջ առկա է այն տեսակետը, որ Մահմանադրությունը, օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, և իշխանությունը, վերջին հաշվով, նախատեսված են մարդու բնական իրավունքների իրացումն ապահովելու համար²⁵: Մարդու իրավունքների հարգումը և պաշտպանությունը պետք է լինի հանրային օղակների աշխատանքի չափանիշը: Ճանաչելով արժանապատվության գոյության իրավունքը, Բ.Ա. Կիոստյակովսկին նշում է, որ մարդկային անհատականությունը գոյություն ունի պետությունից անկախ, և ունի առավելություն վերջինիս նկատմամբ²⁶: Նշված հեղինակների՝ մարդու իրավունքների վերաբերյալ կատարված դատողություններն առավել քան մոտ են ժամանակակից սահմանադրական ընկալումներին:

Եթե փորձենք կարճ ամփոփել վերը նշված դատողությունները էթիկափիլիսոփայական ընկալումների տեսանկյունից, ապա անհրաժեշտ է արձանագրել, որ արժանապատվությունը բարոյական հասկացություն է, որը որակում է մարդուն որպես անհատականություն՝ ընդգծելով վերջինիս նկատմամբ հասարակության վերաբերմունքը:

Արժանապատվությունը բացի բարոյաէթիկական ֆենոմեն լինելուց, նաև իրավական հասկացություն է, և ունի մեզ հետաքրքրող տեսանկյունից առաջին հերթին սահմանադրական հետազոտման անհրաժեշտություն:

²⁵ *Новгородцев П.И.* Об общественном идеале. М.: Изд-во «Пресса», 1991. С.107.

²⁶ *Кистяковский Б.А.* Государственное право (общее и русское). Лекции Б.А. Кистяковского, читанные в Московском коммерческом институте в 1908/1909 академическом году // Кистяковский Б.А. Философия и социология права. СПб. 1999. С. 534.

Ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինում մարդու արժանապատվությունն իրենից ներկայացնում է բացարձակ պաշտպանության ենթակա սահմանադրական բարձրագույն արժեք: Արժանապատվությունն առանց բացառության տարածվում է կյանքի բոլոր ոլորտների վրա:

Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա Նախաբանի այն հիմնարար դրույթը, համաձայն որի՝ «մարդու իրավունքները բխում են մարդկային անհատներին հատուկ արժանապատվությունից»²⁷:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն, որը վերտառված է «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները», Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն արժեքը մարդն է: Մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Իսկ ՀՀ Սահմանադրության մեկ այլ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները վերտառությամբ 2-րդ գլխի 22-րդ հոդվածն արձանագրում է մարդու արժանապատվության՝ որպես հիմնական իրավունքի անխախտելիությունը:

Սահմանադրական նման լուծումները մի դեպքում կարևորում են մարդկային արժանապատվության սահմանադրական օբյեկտիվ արժեք լինելու հանգամանքը, մյուս դեպքում արժանապատվությունը ստանում է սուբյեկտիվ հիմնական իրավունքի որակ, որը ոչ պատահաբար գլխավորում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները վերտառությամբ 2-րդ գլուխը:

Մարդու արժանապատվության վերաբերյալ հիմնախնդիրը քննության առարկա է դարձել առանձին պետությունների սահմանադրական արդարադատության մարմիններում: Ուշադրության են արժանի Գերմանիայի սահմանադրական արդարադատության դաշնային մարմնի իրավական դիրքորոշումները, որոնց շրջանակում «մարդկային արժանապատվությունը» ճանաչվել է բացարձակ և առաջնահերթ արժեք²⁸:

²⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. հոկտեմբերի 4-ի ՄԴՌ-649 որոշումը, VII, 4:

²⁸ St. u 5 BVerfGE 85 (204); 6 BVerfGE 32 (41); 45 BVerfGE 187 (227); 109 BVerfGE 279 (311); 115 BVerfGE 118 (152): highest constitutional value» «սահմանադրական բարձրագույն արժեք»; 93 BVerfGE 266 (293); 107 BVerfGE 275 (284): absolute limit, no balancing with other basic laws».

Մարդուն, որպես արժանապատվության եզակի կրողին, բարձրագույն արժեք ճանաչելը վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և պետական, և հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել²⁹: Այստեղից էլ տրամաբանորեն բխում է սահմանադրական այն լուծումը, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Կարծում ենք՝ այս հանգամանքով էլ պայմանավորված է հանրային իշխանության կազմակերպման սահմանադրական խնդիրը, որը և հիմնավորվում է հիմնական իրավունքներն իրացնելիս ազատության և հավասարության ապահովման պահանջով, որոնք և կողմնորոշված են դեպի հանրային իշխանությունը՝ ոչ միայն որպես երաշխավորի, այլև հիմնական իրավունքների պոտենցիալ հասցեատիրոջ: ՀՀ Սահմանադրությունը, նախ 3-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, ճանաչելով մարդուն և միայն նրան բնորոշ արժանապատվությունը բարձրագույն արժեք, ապա, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով որոշակիացնելով մարդ և հանրային իշխանություն հարաբերությունների սահմանը, առաջնային պլան է մղում արժանապատվություն կրող մարդու անհատական շահը: Այս իմաստով արժանապատվությունը ձեռք է բերում սահմանադրական օբյեկտիվ արժեքի նշանակություն և հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների իրացման ապահովման և այդ իրավունքներով սահմանափակված հանրային իշխանության գործունեության մասշտաբ: Անհատի արժանապատվությունը սահմանադրական կարգի հիմնարար նորմ և սահմանադրորեն կազմակերպված հասարակության հիմքն է:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ առկա լուծումները հնարավորություն են ընձեռնում ընդգծելու, որ այն ոչ միայն տեսական, այլ ճյուղային իրավագիտության սահմաններում ձեռք է բերում առաջնային նշանակություն³⁰:

Եթե փորձենք ընդհանուր գծերով համեմատության եզրեր տանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ Սահմանադրու-

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Общая теория государства и права. Академический курс в 3-х томах. Изд. 2-е перераб. и доп. Отв. Ред. Проф. М.Н. Марченко. Т. 1. М.: «Зерцало-М», 2002. С. 475.

թյան փոփոխությունների տեքստի և գործող սահմանադրական նորմերի՝ հիմնախնդրին վերաբերվող կարգավորումների միջև, ապա պետք է արձանագրել, որ ի տարբերություն նախկինի, գործող Սահմանադրությունը (հոդված 202) անփոփոխ հոդվածների թվին է դասել նաև 3-րդ հոդվածը, որպիսի հանգամանքը պետք է արդարացված համարել: Այս իմաստով թերևս անհասկանալի է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի ճակատագիրը, որը ևս պետք է դասել այսպես կոչված հավերժ նորմերի շարքին: Հիմնախնդրի անհրաժեշտության մասին խոսվել է նաև այլ հեղինակների կողմից³¹: Նման մոտեցման ճշմարտացիությունը նախ պայմանավորված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի այն ձևակերպման հետ, որ մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա անօտարելի արժանապատվությունը՝ իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Եթե այս ձևակերպումը համեմատում ենք Սահմանադրության նախկին տեքստի 3-րդ հոդվածի համապատասխան մասի հետ (հոդված 3-րդ, մաս 1), ապա առաջին հայացքից հարց է առաջանում՝ մարդն է բարձրագույն արժեք, թե՛ նրա արժանապատվությունը: Այս իմաստով Սահմանադրության նախկին տեքստում, ի տարբերություն գործողի, բարձրագույն արժեք է ճանաչվում ոչ միայն մարդը, այլև նրա արժանապատվությունը, իրավունքներն և ազատությունները: Իրականում կարծում ենք, որ ձևակերպումների տարբերությունը միայն ձևական է և սահմանադրական նոր մոտեցումն ամենևին չի նշանակում, որ սահմանադիրը խուսափել է արժանապատվությունը բարձրագույն արժեք ճանաչել, այն պարզ պատճառով, որ արժանապատվության կրողը հենց ինքը մարդն է, և միայն մարդն է օժտված արժանապատվությամբ: Հետևաբար, մարդուն ճանաչելով բարձրագույն արժեք, հնարավոր չէ արժանապատվությանը չտալ նույն որակը և սկզբունքորեն անհրաժեշտ է արժանապատվությունը, որպես սահմանադրական արժեք, կապել բացառապես մարդու և նրա անհատականության հետ: Այս իմաստով անհրաժեշտ է նշել, որ եթե մարդը, նրա կյանքը անհատի սահմանադրական կարգավիճակի կենսական հիմքն է, ապա արժանապատվությունը՝ բարոյական:

³¹ Հովհաննիսյան Գ. Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք, էջ. 4:

Սահմանադրական իրականությունն այնպիսին է, որ անհատի սոցիալական կարգավիճակում մարդկային արժանապատվությունը գնահատվում է բարձրագույն նիշով: Նման հետևություն կարել է անել նաև ժամանակակից ժողովրդավարական պետությունների հիմնական օրենքների հետազոտման արդյունքում ևս: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մարդկային անհատականության գնահատման կարևոր չափանիշն արժանապատվությունն է: Ժամանակակից պոզիտիվ իրականությունում մարդու արժանապատվության սկզբունքն է հնարավորություն ընձեռնում մարդուն ազդեցության օբյեկտից վերածել ակտիվ գործող սուբյեկտի:

Իրավաբանական գրականության մեջ այսօր հնարավոր չէ հանդիպել «արժանապատվություն» հասկացության միանման բնորոշմանը: Դրա պատճառներից է նաև այն, որ, ինչպես վերը նշվեց, արժանապատվությունը տարածվում է կյանքի բոլոր ոլորտների վրա, որպիսի հանգամանքը թույլ է տալիս հիմնախնդիրը բնորոշել յուրաքանչյուր դեպքում կոնկրետ ոլորտի առանձնահատկություններից էլնելով: Դա է վկայում նաև դատական պրակտիկան, որը տարբեր հարթություններում անդրադարձ է կատարել արժանապատվության՝ որպես սահմանադրական իրավունք սկզբունքի և մարդու այլ հիմնական իրավունքների հարաբերակցության հարցին՝ գլխավորապես համարելով այն ժամանակակից սոցիալ-իրավական պետության գործողությունների իրական մասշտաբ:

Ժամանակակից պետությունն ունի սահմանադրական պարտականություն իր գործողություններում (իրավաստեղծ, իրավակիրառ, արդարադատության իրականացման ոլորտում) ցույց տալու, որ մարդու արժանապատվությանը սոցիալ-իրավական պետության կայացման ճանապարհին իր գլխավոր հաղթաթուղթն է:

Հարցին տարբեր հարթություններում անդրադարձ է կատարել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, փորձելով որոշակիացնել ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 4-րդ մասում³² ամրագրված յուրաքանչյուր դատապարտյալի՝ ներման

³² ՀՀ ՄԴ իրավական դիրքորոշումներում սահմանադրական նորմերի վրա հղումները համընկնում են մինչև 2015 թվականի Սահմանադրության տեքստի հոդվածների համարների հետ:

կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, արձանագրում է, որ այն վերապահված է **յուրաքանչյուր դատապարտյալի**: Սահմանադրության 43-րդ հոդվածը 20-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածին համապատասխան՝ այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Սահմանադրական դատարանի իրավական դիքորոշումն այնպիսին է, որ ներման ինստիտուտն իրենից ներկայացնում է հանցագործություն կատարած անձի նկատմամբ՝ **մարդու արժանապատվությունը հարգելու**, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսևորում³³:

Սահմանադրական դատարանը, մեկ այլ որոշման շրջանակներում, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 1, 3 և 14.1. հոդվածների բովանդակությանը, ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է, մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, խտրականության ամեն մի դրսևորում, այդ թվում՝ կախված հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Սահմանադրաիրավական այդ դրույթներում առկա է անհատի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը և, առաջին հերթին՝ պետության պարտականությունը՝ **կյանքի բոլոր բնագավառներում** անձի ազատ և **արժանավայել** զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծման խնդրում: Այն երաշխավորված է նաև աշխատանքի բնագավառում, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում (1-ին մաս), համաձայն որի՝ **յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն**³⁴:

³³ ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. փետրվարի 5-ի ՄԴՌ-733 որոշումը, կետ 4:

³⁴ Տե՛ս նաև ՀՀ Սահմանադրության գործող տեքստի հոդված 57, մաս 5:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածում որպես պետության հիմնական խնդիրներ են նախատեսված բնակչության զբաղվածությանը նպաստելը (2-րդ կետ), տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակ ապահովելը³⁵:

ՄԴ-ն մեկ այլ որոշման շրջանակներում քննության առնելով «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքի առանձին դրույթների սահմանադրականության հարցը, իրավացիորեն անդրադարձ է կատարել նաև արժանապատվության խնդրին: Մասնավորապես, ՄԴ –ն որոշման շրջանակներում ընդգծում է, որ մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար: Այն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ՝ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, որը ենթադրում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց գործունեություն միայն այդ իրավունքի և դրա անխախտելիության ապահովման շրջանակներում: ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Յուրաքանչյուր ոք ունի կյանքի, օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք (ՀՀ Սահմ. 15, 38-րդ հոդվածներ): Սահմանադրորեն երաշխավորված է նաև մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ Սահմ. 16-րդ հոդ-

³⁵ Տե՛ս նաև ՀՀ ՀՀ Սահմանադրության գործող տեքստի հոդված 82, 84, 86-ի՝ 2, 7, 8 կետեր:

ված), որի իրավական բովանդակությունից է բխում անձի նկատմամբ անօրինական ամեն տեսակ ֆիզիկական և հոգեբանական ներգործության արգելքը՝ ինչպես մարդու կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո³⁶ նրա դիակի նկատմամբ, այդ արգելքին համարժեք իրավական պաշտպանությունն ապահովելու առումով, որպես նաև մարդու արժանապատվության իրավունքի առանձնահատուկ դրսևորում: Այդ իրավունքն օրենքով ենթակա է երաշխավորված պաշտպանության նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի: ՄԴ-ն գտնում է, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքը սահմանելով փոխպատվաստման իրավական հիմքերը, դոնորի, ռեցիպիենտի (բուժական նպատակներով փոխպատվաստման կարիք ունեցող ֆիզիկական անձի) և բժշկական հաստատությունների

³⁶ Հիմնահարցի վերաբերյալ հստակ իրավական դիրքորոշում է հայտնել Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, առանձնացնելով իրավական արժեքը սուբյեկտիվ իրավունքից (քանի որ մարդու մահվամբ դադարում է մարդու իրավասուբյեկտությունը, ինչը ենթադրում է, որ մահացած մարդը չի կարող լինել սուբյեկտիվ իրավունքի կրող)՝ դատարանը նշում է, որ պահպանվում է արժանապատվության հարգման պահանջի իրավունքը (պաշտպանվում է քրեական և քաղաքացիական իրավունքի միջոցով՝ այլ անձանց ապօրինի միջամտություններից), որը ներկայացնելու իրավունքը փոխանցվում է մահացածի հարազատներին: Մանրամասն տե՛ս Dreier (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 72; Sachs (Hrsg.): Grundgesetz, Art. 1 Rdnr. 53ff. Ipsen: Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 57–58. BVerfG: Решение от 19 октября 2006: Аз. 1 БvR 402/06 <https://openjur.de/u/364980.html>, Գ. Հովհաննիսյան: Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական իրավունք, էջ. 12: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արժանապատվության իրավունքի պաշտպանության մեխանիզմները սահմանված են ճյուղային օրենսդրությամբ, ապա անհրաժեշտություն է առաջանում մահացած անձանց իրավունքների պաշտպանության ենթատեքստում որոշակիություն մտնելու համար հղում կատարել, օրինակ, ՀՀ քաղ. օր-ի «Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանությունը» վերտառությամբ 19-րդ հոդվածի 2-րդ մասի վրա, որի ուժով Քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո:

հիմնական իրավունքներն ու պարտականությունները, կոչված է նաև երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3, 14, 15, 16, 17 և 38-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորման սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատությունների անմիջական գործադրման անխախտելիությունը, որոնց սահմանադրաիրավական բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ հիշյալ օրենքի և վերջինիս սույն գործով վիճարկվող հոդվածի իրավակարգավորման հիմքում պետք է դրվեն.

– մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը,

– անձի անձեռնմխելիության, ազատության և որպես վերջինիս դրսևորում՝ ազատ կամաարտահայտության երաշխավորված պաշտպանությունը,

– անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակայությունը հասարակական շահի նկատմամբ,

– արդյունավետ, մատչելի, պետության սահմանադրաիրավական պարտավորությունների շրջանակներում բժշկական սպասարկման, այդ թվում՝ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու պայմանների ստեղծումը,

– փոխպատվաստման բնագավառում կոռուպցիոն հնարավոր դրսևորումների բացառումը³⁷:

Քննարկվող համատեքստում առանձնակի կարևորվում է նաև ՀՀ Սահմանադրական բարեփոխումների արդյունքում նոր՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի ճանաչումը: Սակայն ասել, թե, մինչև 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունները, ՀՀ Սահմանադրությունը լռում էր քննարկվող իրավունքի մասին, ճիշտ չի լինի, քանզի ՀՀ Սահմանադրության նախկին տեքստի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ մարդուն չի կարելի ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի, ինչը ենթադրում էր, որ մարդն ունի առանց իր համաձայնության գիտական, բժշկական և այլ փորձերի չենթարկ-

³⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. սեպտեմբերի 14-ի ՍԴՌ-913 որոշումը, կետ 5:

վելու իրավունք: Սահմանադրության նախկին տեքստի լուսի ներքո անհրաժեշտ է հիմնախնդիրը դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի հետ (նախկին տեքստի), որը երաշխավորում էր յուրաքանչյուրի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

Առաջին հայացքից երևում է, որ 16-րդ հոդվածը ճանաչում էր 2 ինքնուրույն հիմնական իրավունքներ՝ անձնական ազատության սահմանադրական իրավունքը և անձնական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը: Սակայն հոդվածի ամբողջական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն վերաբերվում էր անձնական ազատության սահմանադրական իրավունքին՝ անձնական անձեռնմխելիության խնդիրը կապելով անձնական (ֆիզիկական) ազատության ֆենոմենի հետ, այլ կերպ ասած երաշխավորվում էր **անձնական ազատության անձեռնմխելիության իրավունքը**, իսկ իրական անձնական անձեռնմխելիության իրավունքին վերաբերող սահմանադրական լուծումների մի մասը սահմանված էին 17-րդ հոդվածի 2-րդ մասում:

Խնդիրը կայանում է նրանում, որ անձնական անձեռնմխելիությունը լայն իմաստով ունի գնահատման երկու կողմեր: Դրանք են՝ մարդու **ֆիզիկական անձեռնմխելիությունը (ֆիզիկական ամբողջականության իմաստով) և բարոյական, հոգեկան անձեռնմխելիությունը**: Սահմանադրության նախկին տեքստի համապատասխան հոդվածների համակարգային վերլուծությունից երևում է (հոդված 16), որ շեշտադրում էր կատարված մասնավորապես մարդու ֆիզիկական ազատության (անձնական) անձեռնմխելիության վրա: Սահմանադրության նախկին լուծումները հնարավորություն չէին տալիս ամբողջական հասկանալ անձնական անձեռնմխելիության իրավունքի բովանդակությունը: Այս իմաստով, թերևս առավել քան արդարացված է սահմանադրական նոր նախաձեռնությունը՝ տրամաբանական ակնհայտ կապի մեջ գտնվող ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի առանձնացումը մարդու անձնական ազատության իրավունքից, ինչը հնարավորություն է ընձեռնում անձնական անձեռնմխելիության իրավունքը գնահատել լայն իմաստով:

Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքն անմիջապես հաջորդում է մարդու կյանքի իրավունքին և վերջինիս հետ միասին

գտնվում են սերտ կապի մեջ սույն հոդվածի շրջանակներում քննության առարկա անձեռնմխելի համարվող **մարդու արժանապատվության իրավունքի հետ**: Քննարկվող հիմնական իրավունքի կապը մարդու կյանքի իրավունքի հետ դրսևորվում է նրանում, որ վերջինս մարդու ֆիզիկական գոյության իրավունքն է: Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության սահմանադրական իրավունքը կոչված է ապահովելու հանրային իշխանության մարմիններից մարդու **ֆիզիկական և հոգեկան կողմերի ամբողջականությունը, այլ ոչ թե ֆիզիկական ազատության անձեռնմխելիությունը**: Հանրային իշխանության մարմինների կողմից ցանկացած միջամտություն, առանց մարդու արտահայտած ազատ և հստակ համաձայնության, ենթական է պետության իրավական արձագանքին: Անհրաժեշտ է նշել, որ այս իմաստով նշանակություն չունի միջամտությունը մարդու քննարկվող իրավունքին դրսևորվում է համապատասխան ներարկումների, կտրվածքների, մարմնի առանձին մասերի առանձնացման, արյան կամ արտաթորանքների նմուշներ վերցնելով, թե ինչպես գործող Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասն է նշում՝ եվգենիկական փորձերի, մարդու վերարտադրողական կլոնավորման³⁸ կամ մարդու վրա ֆիզիկական և հոգեկան ազդեցություն ունեցող այլ ձևերով, որոնց շրջանակն առանձին օրենքներով հստակեցման կարիք ունի:

³⁸ Ժամանակակից գիտությունում կլոնավորումը բնորոշվում է որպես օրգանիզմի կամ առանձին բջիջների գենետիկորեն նույնական պատճենների պատրաստման գործընթաց: 1980թ. Աշխարհում առաջին անգամ տրամադրվել է կլոնավորման արտոնագիր, իսկ մեկ տարի անց ստեղծվեց առաջին կլոնավորված կենդանին՝ մուկը: 1997թ. շոտլանդացի գիտնականներին հաջողվեց ստեղծել այծի կլոնը, որին անվանեցին Դոլլի: 2002թ. Ստեղծվեց մարդու օրգանիզմի գրեթե ամբողջական գենետիկական քարտեզը, և նույն թվականին Ռաելիտների կլոնական աղանդավորական կազմակերպությունը՝ հայտարարեց, որ աշխարհում առաջին անգամ ստեղծվել է մարդու կլոնը, սակայն դա հավաստող լուրջ ապացույցներ չներկայացվեցին:

Տարբերում են կլոնավորման երկու տեսակ՝ վերարտադրողական նպատակներով կլոնավորում, որի դեպքում կլոնավորումը կատարվում է մարդու գենետիկական պատճենի ստեղծման համար, և թերապևտիկ նպատակներով կլոնավորում, որի ընթացքում մարդու ԴՆԹ-ի օգտագործմամբ ստեղծվում են նույնական բջիջներ՝ դեռևս անբուժելի համարվող հիվանդությունների բուժման և մարդու մարմնի մասերի, հյուսվածքների փոխպատվաստմանն այլընտրանք գնտելու նպատակով:

2005թ. փետրվարի 19-ին ՄԱԿ-ը կոչ արեց բոլոր անդամ երկրներին ընդունել օրենսդրական ակտեր, որոնք կարգելեն կլոնավորման բոլոր տեսակները, քանի որ դրանք հակասում են **մարդու արժանապատվությանը**: 2005թ. մարտի 8-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 59/280 բանաձևով ընդունեց «Մարդու կլոնավորման մասին» հռչակագիրը, որով կոչ է արվել օրենսդրորեն արգելել մարդու կլոնավորման բոլոր տեսակները, սակայն ունիվերսալ միջազգային իրավական փաստաթուղթ պատրաստելու փորձերը դեռևս հաջողությամբ չեն պսակվում:

Քննարկվող ենթատեքստում կառուցողական պետք է համարել Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապի՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի հերթական նիստերից մեկում հնչեցրած այն միտքը, որ **անհրաժեշտ է բացառել մարդու կլոնավորումը և վերջինիս նկատմամբ իրականացվող այլ գիտափորձերը, որոնք հակասում են կրոնական արժեքներին, էթիկայի նորմերին՝ շեշտելով, որ դրանք նսեմացնում են մարդկային տեսակի և ընտանիքի բնական էությունը**: Կաթոլիկ եկեղեցու առաջնորդն իր մեկնությունն ավարտում է այն խոսքերով, որ երբեք չպետք է դրվի էթիկայի չափորոշիչների և գիտության առաջընթացի միջև ընտրության հարց. գիտական անհրաժեշտ զարգացումները պետք է ընթանան էթիկական նորմերի, **մարդկային արժանապատվության անվերապահ պահպանմամբ**:

Այսօր մարդու կլոնավորումն արգելող միակ միջազգային փաստաթուղթը Մարդկային էակների կլոնավորմանն առնչվող՝ կենսաբանության և բժշկության կիրառման հետ կապված՝ մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության մասին Կոնվենցիայի 1998թ. հունվարի 12-ի լրացուցիչ արձանագրությունն է, որը ստորագրել են Եվրոպայի Խորհրդի 43 անդամ պետություն: Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ արգելվում է մարդկային էակի ստեղծմանը ցանկացած միջամտություն, եթե այն նույնական է այլ մարդուն, կենդանուն կամ մահացածին:

Փամանակակից աշխարհում լայն տարածում է գտել մարդու կլոնավորման քրեականացումը: Մասնավորապես, նման հանցակազմեր են նախատեսվել Իսպանիայի, Կոլումբիայի, Էստոնիայի, Մեքսիկայի, Մոլդովայի քրեական օրենսգրքերում:

Որոշ երկրներում կլոնավորման համար քրեական պատասխանատվությունը սահմանված է առանձին օրենքով: Օրինակ, Գերմանիայի Դաշնային Հանրապետության «Էմբրիոնների պաշտպանության մասին» դաշնային օրենքը հանցագործություն է համարում կենդանի կամ մահացած մարդուց գենետիկորեն նույնական էմբրիոն ստեղծելը: Մեծ Բրիտանիայում կլոնավորումն արգելված է «Մարդու վերարտադրողական կլոնավորման մասին» օրենքով:

Քննարկվող իրավունքը ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այն կրողին հնարավորություն է տալիս պաշտպանվել հանրային իշխանությունից, սակայն սա չի նշանակում, որ, օրինակ, մասնավոր լաբորատորիաներն (աշխատակիցները) իրավունք ունեն առանց իրավունքի կրողի համաձայնության միջամտել մարդու ֆիզիկական և հոգեկան ոլորտներին: Այս ոլորտում հսկայական են օրենսդիր մարմնի անելիքները, որը նախ առանձին օրենքով պետք է հստակեցնի այդ իրավունքի պաշտպանության առարկայի ծավալները և միջամտության հնարավոր սահմանները, ապա ծավալեն նաև սահմանադրական փոփոխություններին համահունչ արարքների քրեականացման գործընթաց³⁹՝ երրորդ անձանց ապօրինի միջամտությունից մարդու նշված իրավունքը պաշտպանելու համար: Այս իմաստով թերևս ՀՀ քրեական օրենսգրքի 127-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում առանց անձի համաձայնության վերջինիս բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար: Իսկ ահա նոր Սահմանադրությունը, բացի գիտական, բժշկական փորձերից խոսում է նաև մարդկանց նկատմամբ հնարավոր այլ փորձերի չենթարկվելու հիմնական իրավունքի մասին, որոնց համար նշված

³⁹ Ներկա փուլում քրեական նոր օրենսգրքի նախագծի շրջանակներում առաջարկվող փոփոխությունները՝ (Հոդված 184. Մարդու օրգանի, հյուսվածքի կամ ֆիզիոլոգիական կամ անատոմիական այլ նյութի ապօրինի շրջանառությունը, Հոդված 186. Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձի ենթարկելը) մեծ հաշվով չեն լուծում մեզ հետաքրքրող իմաստով քննարկվող սահմանադրական իրավունքի քրեաիրավական պաշտպանության խնդիրները: Կարծում ենք կա սահմանադրական փոփոխություններին համահունչ հանցակազմերի օբյեկտիվ կողմի հատկանիշների փաստակազմի ծավալի որոշակի ացման անհրաժեշտությունը:

հողվածի օբյեկտիվ կողմը բավարար քրեաիրավական պաշտպանական մեխանիզմները լուում են:

Քննարկվող ենթատեքստում կարևորվում է նաև իրավունքի հասցեատերերի մարդուն նման փորձերի հնարավոր հետևանքների մասին նախապես տեղեկացնելու պարտականությունը: Այսինքն, մարդու համաձայնությունը պետք է հենված լինի հետևանքների վերաբերյալ արհեստավարժ մասնագետների կողմից տրված, համապատասխան տեղեկանքներով հաստատված տեղեկատվության վրա: Այս պարագայում մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունն երաշխավորված է արհեստավարժների կողմից բժշկական էթիկային նորմերի պահպանման սահմանադրական պարտականությամբ:

Բացի սահմանադրական արդարադատության ազգային մարմինների, արժանապատվության իրավունքին վերաբերող հստակ դիրքորոշումներ է հայտնել նաև ՄԻԵԴ-ը: Վերլուծելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը՝ արձանագրում ենք, որ պատասխանող պետությունների՝ արժանապատվության պաշտպանության հետ անհամատեղելի գործողությունները կապված են այնպիսի ոլորտների հետ ինչպիսիք են՝ կյանքի իրավունքը (ՄԻԵԿ հոդված 2)⁴⁰, խոշտանգումների արգելումը (ՄԻԵԿ հոդված)⁴¹, ստրկության և հարկադիր աշխատանքների արգելումը (ՄԻԵԿ հոդված 4)⁴², ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը

⁴⁰ Круз Варас и другие против Швеции: Постановление Европейского Суда по правам человека от 20 марта 1991 года (жалоба № 15576/89). (жалоба № 15576/89) <http://europeancourt.ru/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/kruz-varasi-drugie-protiv-shveicii-postanovlenie-evropejskogo-suda/>. (20.12.2015).

⁴¹ Ирландия против Соединенного Королевства: Постановление Европейского Суда по правам человека от 18 января 1978 года (жалоба N 5310/71). Круз Варас и другие против Швеции: Постановление Европейского Суда по правам человека от 20 марта 1991 года (жалоба N 15576/89). [рус., англ] <http://docs.pravo.ru/document/view/19381560/17526715/>; (20.12.2015). Tyrer v. the United Kingdom: Постановление Европейского Суда по правам человека от 25 апреля 1978 года (жалоба N 5856/72 Янков против Болгарии: Постановление Европейского Суда по правам человека от 13 ноября 2003 года. (жалоба N 39084/97). <http://base.garant.ru/55022282/#ixzz3n1gKqVGS>; (20.12.2015).

⁴² Ван Дер Мусселе против Бельгии: Постановление Европейского Суда по правам человека от 23 ноября 1983 года (жалоба N 8919/80). <http://european-court.ru/resheniya-evropejskogo-suda-na-russkom-yazyke/van-der-mussele-protiv-belgii-van-der-mussele-v-belgium-postanovlenie-evropejskogo-suda/>. (20.12.2015).

(ՄԻԵԿ հոդված 5)⁴³, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը (ՄԻԵԿ հոդված 8) և այլն:

Կատարված վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ արժանապատվությունն առանց բացառության տարածվում է կյանքի բոլոր ոլորտների վրա:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ արժանապատվության իրավունքը դիտարկվում է սուբյեկտիվ իրավունքների էության վերլուծության ենթատեքստում: Առանձին հեղինակներ, փորձելով ընդգծել արժանապատվության, որպես սուբյեկտիվ իրավունքի առանձնահատկությունները, նշում են, որ այն իրենից ներկայացնում է իր կատարածի և չկատարածի վերաբերությամբ իր անձի նկատմամբ հասարակության բարոյաքաղաքական գնահատականի ձևավորման պահանջի իրավունք⁴⁴: Առանձին հեղինակներ, փորձելով հերքել վերը նշված դատողությունը, ընդամենը ընդգծում են, որ արժանապատվության իրավունքը պետք չէ հասկանալ, որպես կատարածի վերաբերությամբ հարգանքի և պատվի իրավունք⁴⁵:

Մեկ այլ բախումնային իրավիճակ կունենաք, եթե հատուցելի գործարքի առարկա դիտենք ապագա երեխան: Մարդու՝ գործար-

¹⁵ Ներսեսուկա Լ.Ս., Խաչատրյան Ջ.Ս., Մկրտչյան Ս.Ս. Կենսաէթիկայի ներածություն, Եր., 2012, էջ 159:

քի առարկա լինելը այսօր շատ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, քրեաիրավական հարաբերությունների, մասնավորապես, թրաֆիքինգի, մարդկանց, մարդու օրգանների առուվաճառքի համատեքստում է դիտարկվում: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածը հանցագործություն է դիտարկում խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը:

Բացի վերը նշվածից, այլ հարցեր էլ են առաջանում, մասնավորապես այն, երբ առուվաճառքի առարկան՝ ապրանքը, չի համապատասխանում ապրանքի այն որակին, տեսակին, որ կողմերն ամրագրել էին պայմանագրում:

Փաստորեն ստացվում է, որ գնորդը կարող է վաճառողից պահանջել սահմանված որակի, տեսականու, քանակի ապրանք մատակարարել. կրկին բխվում ենք անհեթեթ իրավիճակի: Այսինքն՝ առուվաճառքի պայմանագրին վերաբերող մի շարք կարգավորումներ՝ առարկան, տեսականին, քանակը, որակը, պատահական կորստի ռիսկը, երաշխիքը, պիտանիության ժամկետը, կոմպլեկտայնությունը, թերություններով հանձնելը, ապահովագրումը, պայմանագրի չկատարումը և այլն, կիրառելի չեն սույն դեպքում, ավելին՝ հակասում են մարդու բնական իրավունքի էությանը:

Հետևաբար կարող ենք փաստել, որ փոխնակ մոր հետ կնքվող պայմանագիրը չի կարող լինել առուվաճառքի պայմանագիր:

Փոխնակության ինստիտուտի մասնավոր-իրավական հարցերը ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի լույսի ներքո

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը՝ փոխնակ մայրը, պարտավորվում է պատվիրատուի՝ նպատակադրված ծնողի կամ ծնողների առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Սույն դեպքում «կատարել որոշակի գործողություններ» ասելով կարող ենք հասկանալ սաղմը կրել իր արգանդում, հղիության

ընթացքում ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ կատարելուց՝ ծխախոտ, ալկոհոլ օգտագործելուց, երեխային ծննդաբերել, ծննդաբերելուց հետո հանձնել նպատակադրված ծնողներին և այլն:

Եթե գործ ունենք ծառայությունների վճարովի մատուցման հետ, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը: Այս դեպքում մեկ այլ հակասող իրավիճակ՝ սաղմի, չծնված երեխայի կարգավիճակը, այսինքն՝ պայմանագրի լուծման դեպքում ի՞նչ ճակատագիր է պտուղն ունենում:

Երբ խոսում ենք փոխնակ մոր մասին, ստացվում է փոխնակ մայրը՝ պայմանագրային հարաբերության մի կողմը, տրամադրում է իր արգանդը, ավելին՝ իր ներսում կրում է սաղմը: Ստացվում է՝ կինը տրամադրում է իր մարմնի մասը, այսինքն՝ կինը իր մարմնի միջոցով ծառայություններ է մատուցում:

Մեկ այլ հակասական մոտեցում, եթե փոխնակ մայրը՝ որպես երեխային կրող, որոշակի շաբաթականից հետո արորտի իրավունք չունի, ստացվում է՝ կատարողը կամ պատվիրատուն օրենսդրորեն ամրագրված պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքից չի կարող օգտվել:

Այսինքն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրին վերաբերող մի շարք կարգավորումներ՝ միակողմանի լուծումը, երկկողմանի լուծումը, կատարումից խուսափելը, ծառայության արդյունքը չընդունելը, չվճարելը, կիրառելի չեն սույն դեպքում, ավելին՝ հակասում են մարդու բնական իրավունքի էությանը:

Հետաքրքրական է մեկ այլ հարց, թե մարդու, այս դեպքում՝ կնոջ, մարմինը կամ մարմնի որոշակի մասը, օրգանը, հյուսվածքը, բջիջը կարո՞ղ է դառնալ գործարքի առարկա: Դա համարվում է մարդու մարմնի մի մասի շահագործում, ինչը համարվում է հանցագործություն:

Մեկ այլ հարց, եթե մարդու մարմինը կամ մարմնի մի մասը օգտագործվում է հատուցելի կամ անհատույց հիմքով, կա արդյո՞ք տարբերակում: Արդյո՞ք նման դեպքում պայմանագրային հարաբերությունները չեն օրինականացնի, իրավական հենքով կայուն դարձնի մարմնավաճառությունը, ստրկությունը:

Եթե փոխնակ մայրն իր արգանդը ժամանակավորապես վճա-

րովի օգտագործման է հանձնում, իսկ ինչո՞ւ մարմնավաճառը չի կարող ժամանակավորապես վճարովի օգտագործման հանձնել իր մարմնի որոշակի մասը: Այսօր մարմնավաճառությունը համարվում է զանցանք՝ վարչական իրավախախտում¹⁶: Հարցն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե բարոյական, այլ իրավական հարթությունում, քանի որ երբեմն պայմանագրային հարաբերությունները լիարժեք չեն կարող արտահայտել հանրության շահերը:

Արդյո՞ք բազմամայրության (բազմածնողության) ինստիտուտի կիրառումն արդիական է, նրանցից որն ի՞նչ իրավունքներ ունի և ի՞նչ պարտականություններ է կրում, ընդ որում՝ կրոնական տեսանկյունից փոխնակությունը համարվում է ծայրահեղ անբարոյական երևույթ:

Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն.

«9. Փոխնակ մայրն **իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել** Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց՝ ՎՕՏ-ից օգտվող անձին կամ ամուսիններին:

10. Փոխնակ մայրն իրենից ծնված երեխայի նկատմամբ **չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն** երեխային սահմանված կարգով պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին **հանձնելու պահից**»:

Օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը նախատեսում է, որ փոխնակ մայրը իրավունք չունի հրաժարվել ծնված երեխային հանձնել: «Իրավունք չունենալը» և «պարտավոր լինելը» տարբեր են:

Այստեղ հարց է առաջանում, թե որն է հանձնման պահը՝ երեխայի ծնվելու՞, երեխայի հանձնման-ընդունման ակտը (արձանագրությունը) երկկողմանի ստորագրելու՞, թե՞ պայմանագրով նախատեսված այլ պահ:

Եթե խոսքը գնում է այն մասին, որ կողմերի միջև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է կնքվել, ապա ծառայության արդյունքի հանձնումը և պատվիրատուի կողմից դրա ընդունումը պետք է հավաստվի համապատասխան եղանակով, օրինակ, հանձնման-ընդունման ակտով:

¹⁶ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 179¹, ընդ որում՝ օրենսգրքում «պոռնկություն» բառի փոխարեն խոբիուրդ է տրվում օգտագործել «մարմնավաճառություն» բառը:

Մյուս վիճելի հարցն այն է, թե ո՞ր պահից են դադարում փոխնակ մոր իրավունքները, պարտականությունները, և ո՞ր պահից են սկսվում նպատակադրված ծնողների իրավունքներն ու պարտականությունները՝ երեխայի ծնվելու, երեխայի հանձնում-ընդունումը կատարելու, երեխայի ծննդյան վկայականում նպատակադրված ծնողների որպես ծնող գրանցվելու, թե՛ պայմանագրով սահմանված այլ պահից:

Օրենքի տառացի մեկանաբանությունից բխում է, որ փոխնակ մայրն իրավունք ունի երեխայի նկատմամբ մինչ նպատակադրված ծնողներին հանձնելը: Այսինքն ստացվում է, որ երեխայի ծնվելուց հետո մինչև նպատակադրված ծնողների հանձնելը, շատ կարճ, բայց որոշակի ժամկետով փոխնակ մայրը դառնում է նաև երեխայի սոցիալական մայր:

Այստեղից էլ մեկ այլ հակասություն, արդյո՞ք այդ ժամանակահատվածում փոխնակ մայրը չի կարող կատարել իրեն՝ որպես երեխայի իրավական մորը վերապահված իրավունքներ:

Ենթադրենք մի իրավիճակ, երբ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առարկան սաղմն է, իսկ եթե մի քանի սաղմ է ձևավորվել, ինչպե՞ս վարվել: Եթե հարցը դիտարկենք պայմանագրային հարաբերությունների համատեքստում, ապա կարևոր է պատվիրատուի կամ կատարողի իրավունքների, պարտականությունների ծավալն ուսումնասիրել:

Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման հավելված 2-ի 51-րդ կետի համաձայն՝ **բազմապտուղ (3 և ավելի) հղիություն դեպքում** հղիի դիմումի և իրազեկված գրավոր համաձայնությամբ կատարվում է զարգացող սաղմերի, պտուղների կրճատում (ռեդուկցիա) վիրահատական միջամտության միջոցով կնոջ կողմից նշված քանակին համապատասխան, սակայն ոչ ավելի քան 3 սաղմ, պտուղ:

Նույն հավելվածի 52-րդ կետի համաձայն՝ սաղմերի, պտուղների թվի պահպանելու կամ հեռացնելու միջամտությունն իրականացվում է (. . . .) մինչև հղիության 10 շաբաթական ժամկետը:

Ընդ որում՝ Մեծ Բրիտանիայում ավելորդ սաղմերի կրճատումը տեղի է ունենում ոչ ուշ, քան երկշաբաթյա ժամկետում, Ֆրանսիայում այդ երևույթն արգելված է:

Օրենքի մեկնաբանությունից բխում է, որ սաղմերի, պտուղների կրճատումը տեղի է ունենում հղի կնոջ դիմումի հիմա վրա: Այսինքն՝ անտեսվում է նպատակադրված ծնողի կամ ծնողների, այն է՝ պատվիրատուի, իրավունքը, քանի որ վերջինսի կարծիքը հաշվի չի առնվում:

Ավելին՝ մեկ այլ հակասական իրավիճակ կստեղծվի, եթե փոխնակ մայրը հղի կինը, չհրաժարվի սաղմերի, պտուղների կրճատումից: Նման պարագայում երեխաների ծնվելուց հետո կազուսային իրավիճակի առաջ կկանգնեք, մասնավորապես, ծնվածներից կոնկրետ ո՞րն է այն երեխան, որ պատվիրակվել էր նպատակադրված ծնողի կողմից, արդյո՞ք մնացած երեխաները ևս դառնում են նպատակադրված ծնողի երեխաներ, փոխնակ մոր՝ երեխաներից հրաժարվելու դեպքում արդյո՞ք նպատակադրված ծնողների մոտ պարտականություն է առաջանում երեխաների հանդեպ, արդյո՞ք նպատակադրված ծնողներն են կրում բազմասաղմության ռիսկը և այլ հարցեր:

Փոխնակության ինստիտուտի պայմանագրային հարաբերությունների շրջանակում մեկ այլ հետաքրքրական հարց է այն, երբ երեխան ծնվում է որևէ հիվանդությամբ, և իրավական, նպատակադրված ծնողները հրաժարվում են երեխայից, այդ դեպքում ո՞վ է դառնում երեխայի ծնող: Օրենքով արգելված է փոխնակ մորը երեխային իր մոտ պահել, իսկ այս դեպքում հանձնել չի էլ կարողանում, քանի որ նպատակադրված ծնողը չի ընդունում երեխային կամ նպատակադրված ծնողը մահացել է: Արդյոք կողմը՝ փոխնակ մայրը, կարող է դատարան դիմել և դատարանից պահանջել պարտավորեցնել նպատակադրված ծնողին կատարելու պայմանագրային պարտավորությունները:

Մեկ այլ հարց, որը վերաբերում է նպատակադրված ծնողի՝ երեխայի ընդունումից հրաժարման դեպքում երեխայի ծննդյան վկայականում որպես ծնող նշմանը: Սույն դեպքում կրկին օրենսդրական բացի հետ գործ ունենք, քանի որ փոխնակ մայրն իրավունք չունի երեխայի իրավական մայր լինել, քանի որ հատուցելի գործարքի արդյունքում նա ծառայություն է մատուցել՝

երեխա ծննդաբերել, իսկ նպատակադրված ծնողը հրաժարվում է երեխային ընդունումից:

Կարևոր է արդյոք ք ազգակցական կապի առկայությունը փոխնակության ինստիտուտի կիրառման դեպքում:

Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր դռնոր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են իրենց սեռաբջիջը կամ սաղմը տրամադրել հարազատներին, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դռնոր լինելու բժշկական հակացուցումներ:

Ընդ որում՝ հարազատ ասելով անհրաժեշտ է հասկանալ արյունակցական 1-ին, 2-րդ, 3-րդ աստիճանի կապ ունեցող անձին:

Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ:

Օրենքը պարտադիր պայման չի նախատեսում, թեպետև որոշ երկրներում առկա է մոտեցում այն մասին, որ երեխայի և իրավական ծնողի միջև պետք է լինի կենսաբանական, ազգակցական, ժառանգական կապ, ընդ որում՝ որպես ազգակցական, կենսաբանական, ժառանգական կապի հիմնավորում ներկայացվում է այն, որ եթե երեխան ծնվել է ծնողի «մսից ու արյունից», ապա ծնողն ավելի հոգատար կլինի վերջինիս նկատմամբ, երեխայի և ծնողի կայն ավելի ամուր կլինի: Կարծում եմ՝ այս մոտեցումն հիմնված է բարոյահոգեբանական մտորումների վրա, ինչը չի կարող հիմք հանդիսանալ իրավական նման կարգավորում նախատեսելու համար:

Բացի այդ, միգուցե երկու ծնողն էլ բեղմնունակ չեն, և եթե սահմանվեր կենսաբանական կապի պարտադիրությունը, ստացվում է բեղմնունակություն չունեցող ամուսինները չէին կարող օգտվել փոխնակության ինստիտուտից:

Երբեմն հարց է առաջանում, թե փոխնակության դեպքում պայմանագրի առարկան մոր մարմնի մասն է, թե՛ ինքնուրույն

օրյեկտ հանդիսացող էմբրիոնը, սաղմը: Եթե գործարքի առարկան ինքնուրույն օրյեկտն է, ապա այդ օրյեկտը պետք է ունենա պաշտպանության հատուկ մեխանիզմեր, իսկ եթե գործարքի առարկան մարմնի բաժանելի մի մասն է, ապա մեծանում է փոխնակ կնոջ ինքնուրույնությունը՝ իր հայեցողությամբ տնօրինելու իր մարմինը:

Մեկ այլ հարց, որը վերաբերում է փոխնակ մոր կողմից ծնված երեխային չհանձնելուն, այն դիտարկել քրեաիրավական (մարդուն առևանգել, ծնողներից երեխային ապօրինի բաժանել), թե՞ քաղաքացիաիրավական հարաբերություններում (պարտավորեցնել կատարել պայմանագրային պարտավորությունները):

Եթե նպատակադրված ծնողներն են հրաժարվում երեխային ընդունել, ապա պատասխանատվության ի՞նչ միջոցներ են կիրառել: Հարցը քրեաիրավական հարթությունում¹⁷ չենք կարող դիտարկել, քանի որ նրանք դեռ երեխայի իրավական ծնողները չեն, ուստի լուծումը մնում է քաղաքացիաիրավական հարթությունում, որը ժամանակատար է և ոչ միշտ է բխում երեխայի լավագույն շահից:

Երբեմն առաջանում են հարկային հարցեր, երբ կնքվում է քաղաքացիաիրավական պայմանագիր, նոտարական վավերացում անցնում: Խոսքը կոմերցիոն, առևտրային փոխնակության մասին է: Այս պարագայում փոխնակ կինը ունենում է հարկային պարտավորություն, քանի որ իր մարմինն օգտագործելով եկամուտ է ստացել:

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը՝ համաձայն որի՝ ռեզիդենտի համար հարկվող օրյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) հարկվող եկամուտը, ստացվում է, որ փոխնակ մոր կողմից ստացված եկամուտը ենթակա է հարկման:

¹⁷ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 170 (Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը):

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է բխեցնել, որ փոխնակության՝ որպես վերարտադրողական իրավունքի իրացումը մարդու բնական իրավունքն է՝ կապված կոնկրետ անձի հետ, ուստի հանրային ազդման լծակները հնարավորինս պետք է սահմանափակվեն, քանի որ այդ իրավունքը հանդիսանում է մարդու սոմատիկ իրավունք: Այսինքն՝ դա անձին տրված հնարավորությունն է՝ «ինքն իր մարմնի սեփականատերը» հանդիսանալու ուսմունքի ներքո, իր կամքի ազատ արտահայտման եղանակով արդյունավետ իրականացնելու իր մարմինը տիրապետելու, տնօրինելու, օգտագործելու իրավագործությունները:

Կարծում եմ՝ փոխնակության իրավական հարցերի, այդ թվում՝ պայմանագրային հարաբերությունների կարգավորումը, պետք է իրականացվի առանձին փաստաթղթի, առանձին կարգավորման տեսքով՝ հաշվի առնելով վերջինիս առանձնահատկությունները:

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԸ ԵՎ ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

Դ.Ա. Թումասյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Նման ձևակերպումը թույլ է տալիս եզրահանգել, որ օրգաններն ու հյուսվածքներն օգտագործելն առանց շահույթի աղբյուր դարձնելու օրինական է: Հետևաբար պետք է նախևառաջ պարզել ապօրինի դրսևորումները և դրանց բազմազանությունը: Ավելին, նման ձևակերպումն առաջացնում է օրգանների ու հյուսվածքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտի վերանայում և ՀՀ Սահմանադրության համապատասխանեցում՝ ընդհուպ մինչև քրեաիրավական հարաբերությունների վերանայում:

Մարդու առողջության, ներառյալ՝ օրգանների և հյուսվածքների շրջանառությանն առնչվող հարաբերությունների, պաշտպանությունը բազմաճյուղային է: Այն պաշտպանվում է ինչպես քաղաքացիաիրավական¹ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1077-րդ հոդվածով՝ Պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը, 1088-րդ հոդվածով՝ Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու պահանջների վրա: Մակայն նման վնասի հատուցման իրավունքի ծագման պահից երեք տարի անցնելուց հետո ներկայացված պահանջներն անցյալ ժամանակի համար բավարարվում են ոչ ավելի, քան հայցի ներկայացմանը նախորդած երեք տարիների համար:

թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելու հիմքերը և այլ հողվածներով), վարչաիրավական (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47-րդ հոդվածով՝ Ապօրինաբար բժշկությամբ զբաղվելը, 47.1-րդ հոդվածով՝ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնները խախտելը, 47.2-րդ հոդվածով՝ Կամավոր բժշկական ամլացում կատարելու կարգը կամ պայմանները խախտելը և այլ հողվածներով), այնպես էլ քրեաիրավական իրավահարաբերություններով: Տրամաբանական է, որ քրեաիրավական պաշտպանությունն իրականացվում է հատուկ դեպքերում՝ հանցագործություն կատարելիս: Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքների հետ կապված հանցակազմերի շրջանակը ՀՀ քրեական օրենսգրքում² հետևյալն է՝

1. ՀՀ քր. օր-ի 125-րդ հոդված՝ Փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը,

2. ՀՀ քր. օր-ի 127-րդ հոդված՝ Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը,

3. ՀՀ քր. օր-ի 130-րդ հոդված՝ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը,

4. ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդված՝ Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը³,

5. ՀՀ քր. օր-ի 132.2-րդ հոդված՝ Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը,

6. ՀՀ քր. օր-ի 280-րդ հոդված՝ Մասնավոր բժշկական կամ դեղագործական գործունեությամբ ապօրինաբար զբաղվելը, կեղծ դեղեր պատրաստելը կամ իրացնելը,

7. ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետը՝ տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով կատարված սպանություն,

² Այսուհետ՝ քր. օր.:

³ ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 4-րդ մասում որպես մարդու շահագործման ձև նշված է նաև օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

8. ՀՀ քր. օր-ի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը՝ տուժողի մարմնի մասերի կամ հյուսվածքների օգտագործման նպատակով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը:

Մասնագիտական գրականության մեջ տարբերում են՝

– Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործություններ, որոնց սուբյեկտն ընդհանուր է (ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ, 132-րդ, 132.2-րդ և 280-րդ հոդվածներ):

– Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու հետ կապված հանցագործություններ, որոնց սուբյեկտը հատուկ է (ՀՀ քր. օր-ի 125-րդ, 127-րդ և 130-րդ հոդվածներ):

Գրականության մեջ չկա անգամ միասնական մոտեցում, թե օրգանների կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությանը վերաբերող հոդվածներն ինչ օբյեկտի դեմ են ուղղված: Այսպես, Ս.Ս. Տիխոնովայի կարծիքով մարդու օրգանների կամ հյուսվածքների ապօրինի շրջանառությունը պետք է համարվի բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ մարդու օրգանների կամ հյուսվածքների հատուցելի շրջանառությունը վտանգավոր է հասարակության և բարոյականության համար՝ դարձնելով բարոյականությունը մարդու գործունեության կամայականության արդյունք՝ օտարելով անձին հասարակությունից⁴: Նման կարծիք հայտնել է նաև Ջ. Շխագափսունը՝ հավելելով, որ քրեորեն պատժելի պետք է լինի նաև ֆիզիոլոգիական հեղուկների ապօրինի շրջանառությունը⁵:

Նման մոտեցումն այդքան էլ արդարացված չէ, քանի որ՝

1 – արարքի վտանգավորությունն ուղղված է ոչ թե ազգաբնակչության դեմ, այլ կոնկրետ մարդու դեմ և նմանեցնել այս հանցագործությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, տրամաբանական չէ⁶,

⁴ Тихонова С.С. Прижизненное и посмертное донорство в РФ. СПб., 2002. С. 119.

⁵ Шхагансов З.Л. Проблемы уголовной ответственности за трансплантацию // Общество и право, 2009, № 2. С. 9.

⁶ Մանրամասն տե՛ս Սавельев О.Ю. Уголовная ответственность за преступления против личности, связанные с изъятием и использованием органов или тканей человека // Вектор науки Тольятинского государственного университета, 2010, №3(3), էջ 185:

2 – ազգաբնակչության առողջության դեմ ուղղված հանցագործության ձևաչափով այս հանցանքն ընկալելու դեպքում քրեական պատասխանատվության կենթարկվի նաև դոնորը, ինչը նպատակահարմար չէ այն դեպքում, երբ անձը հարկադրված է եղել տալ օրգանը կամ հյուսվածքը, իսկ եթե անգամ նման եղանակներ վերջինիս նկատմամբ չի կիրառվել, ապա քրեական պատասխանատվությունը համարվում է ոչ համաչափ: Այս դեպքում առավել արդյունավետ կլինի պատասխանատվության չենթարկելու հարցի քննարկումը՝ առավել ևս հաշվի առնելով այդ քայլին դիմելու պատճառներն ու պայմանները:

Հաշվի առնելով քննարկվող հարցի անդրազգային բնույթը՝ այն կարգավորված է նաև միջազգային իրավական բազմաթիվ գործիքներով, մասնավորապես դրան վերաբերող դրույթներ ներառված են հետևյալ ակտերում՝

1. Օրգանների թրաֆիքինգի և փոխպատվաստման նպատակով կատարվող զբոսաշրջության վերաբերյալ 2008 թվականի Ստամբուլյան հռչակագիր⁷.

2. Եվրոպայում հիվանդի իրավունքների ապահովման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1994 թվականի Առողջապահության համաշխարհային կազմակերպության⁸ հռչակագիր.

3. Հիվանդի իրավունքների մասին Լիսաբոնի 1981 թվականի հռչակագիր.

4. Կենդանի օրգանների առուվաճառքի վերաբերյալ 1985 թվականի հայտարարություն.

5. Երեխաների առողջության պահպանման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ 1987 թվականի հայտարարություն.

6. Արհեստական բեղմնավորման և էմբրիոնների փոխպատվաստման վերաբերյալ 1987 թվականի հայտարարություն.

7. Էվթանազիայի վերաբերյալ 1987 թվականի հռչակագիր.

8. Մարդու օրգանների փոխպատվաստման վերաբերյալ 1987

⁷ Այսուհետ՝ Ստամբուլյան հռչակագիր:

⁸ Այսուհետ՝ ԱՀԿ:

թվականի հռչակագիր⁹։

9. «Մարդու գենոմ» նախագծի վերաբերյալ 1992 թվականի հռչակագիր։

10. Իրենց պարտականությունների նկատմամբ բժիշկների անպատասխանատու վերաբերմունքի վերաբերյալ 1992 թվականի հայտարարություն և այլ ակտեր։

Հաշվի առնելով բժշկության, մասնավորապես՝ փոխպատվաստումների ու մարդուն օրգանների և հյուսվածքների առնչությամբ այլ հարաբերությունների զարգացումը՝ արդի իրավակարգավորումներում առկա են բազմաթիվ բացեր, որոնք արդյունավետ չեն պաշտպանում մարդու օրգանները և հյուսվածքները հանցավոր ոտնձգություններից։ Բացերը հաճախ հանդիսանում են ոչ միայն իրավական, այլ նաև բարոյաէթիկական բնույթի հիմնախնդիրների համակցություն։

Ստամբուլյան հռչակագիրը, կարևորելով փոխպատվաստման նշանակությունը, առաջարկում է պետություններին ստեղծել այնպիսի օրենսդրական կարգավորում, որը կապահովի դոնորության և փոխպատվաստման ոլորտում անհրաժեշտ փոխպատվաստա-

⁹ Մարդու օրգանների փոխպատվաստման մասին հռչակագիրն առաջարկում է մարդու օրգանների փոխպատվաստմամբ զբաղվող բոլոր բժիշկներին պահպանել հետևյալ սկզբունքները

1. դոնորի և ռեցիպիենտի իրավունքների պահպանում։
2. պոտենցիալ դոնորին բժշկական օգնություն ցույց տալիս ընդունված չափանիշների պահպանում (ցուցաբերվող բժշկական օգնության մակարդակը չի կարող կախված լինել այն հանգամանքից, թե հիվանդը հանդես է գալու որպես դոնոր, թե ոչ)։
3. մահվան փաստի արձանագրման ժամանակ անհրաժեշտ ժամանակակից չափանիշների պահպանում։
4. մարդուն կենդանիների կամ արհեստական օրգանների փորձնական փոխպատվաստում իրականացնելիս Հելսինկյան հռչակագրում ամրագրված՝ մարդկանց նկատմամբ բժշկակենսաբանական հետազոտություններին մասնակցող բժիշկների համար նախատեսված հանձնարարականների պահպանումը։
5. դոնորի և ռեցիպիենտի, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նրանց ընտանիքների անդամների կամ օրինական ներկայացուցիչների տեղեկացված, կամավոր և գիտակցված համաձայնության ստացում։
6. ակնկալվող ռիսկի և բուժման այլընտրանքային հնարավոր մեթոդների իրական և օբյեկտիվ ներկայացում։

նյութի պատշաճ ապահովումը՝ երկրի ներսում բավարարելով օրգանների կամ հյուսվածքների պահանջարկը: Ընդ որում, օրգանների կամ հյուսվածքների բաշխումը չպետք է պայմանավորված լինի ֆինանսական գործոնով, իսկ օտարերկրյա քաղաքացիներին օրգանների կամ հյուսվածքների փոխապատվաստումը կարող է իրականացվել միայն ներքին պահանջարկը բավարարելուց հետո:

Մինչ քրեաիրավական պաշտպանության հարցի քննարկմանն անցնելը նախևառաջ պետք է պարզել պաշտպանության առարկան:

Չնայած որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» ՀՀ օրենքի¹⁰ 1-ին հոդվածի համաձայն՝ հյուսվածքը ծագման, կառուցվածքի և ֆունկցիաների միասնությամբ միավորված, կազմավորված բջիջների և արտաբջջային նյութի ընդհանրությունն է, իսկ օրգանը տարբեր հյուսվածքներից բաղկացած (որոնցից մեկը գլխավորն է՝ առաջատարը) և որոշակի ձև ունեցող մարմնի մաս է, որը տարբերվում է իր հստակ կառուցվածքով, օրգանիզմում զբաղեցրած որոշակի տեղով և կենսագործունեությամբ, այնուամենայնիվ բժշկագիտությունն այնքան էլ համաձայն չէ նման ձևակերպումների հետ, ինչից ելնելով այս կամ այն հյուսվածքը կամ օրգանն այդպիսին ճանաչելն իրականացվում է պայմանականորեն, մասնավորապես դժվարություններ են առաջանում մաշկը կամ արյունը որպես հյուսվածք կամ օրգան դիտելիս:

Իրավահարաբերությունների առարկայի հարցը քննարկելիս պետք է հիշել Օրենքի կարգավորման առարկան, որի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն օրենքի դրույթները չեն տարածվում մարդու վերարտադրողականության գործընթացի հետ առնչվող օրգանների, դրանց մասերի ու հյուսվածքների (ձվաբջիջ, ձվարաններ, ամորձիներ, սերմնահեղուկ, էմբրիոններ)¹¹, արյան և դրա

¹⁰ Այսուհետ՝ Օրենք:

¹¹ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը կարգավորում է ձվաբջիջների, սերմնահեղուկի, ինչպես նաև մասամբ էմբրիոնների առնչությամբ առկա իրավահարաբերությունները:

բաղադրամասերի¹² վրա: Հետևելով Օրենքի տրամաբանությանը՝ կարելի է ենթադրել, որ այդ առարկաները կարող են դառնալ առքուվաճառքի առարկա¹³: Նման ձևակերպումը ոչ միայն անտրամաբանական է, այլ նաև չի բխում բժշկագիտության զարգացման արդի միտումներից և հետևաբար պետք է այս բացառությունների շարքից հանել «ձվարաններ, ամորձիներ» եզրույթները:

Ամբողջ աշխարհում առկա է երկակի մոտեցում անձի կողմից իր օրգանները կամ հյուսվածքները տնօրինելու հարցին. համարել օրգաններն ու հյուսվածքները սեփականության իրավունքով պատկանող առարկա, թե՛ ոչ: Առաջնորդվելով «սա իմ մարմինն է» սկզբունքով¹⁴, ԱՄՆ դատական պրակտիկան ձևավորել է համապատասխան դիրքորոշումներ: Նույն ուղղությամբ է իրականացվում եվրոպական երկրների զարգացումը: Ի տարբերություն դրա՝ ԱՊՀ երկրներում իրավիճակը կա՛մ կարգավորված չէ, կա՛մ հայտնում է հակառակ դիրքորոշում՝ արգելելով մարդուն տնօրինել մարմինն իր հայեցողությամբ:

Նման դեպքերում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը հակասում է տեսության մեջ նախատեսված և որոշ պետություններում օրենսդրորեն ամրագրված մարդու այն իրավունքին, որով նա կարող է տնօրինել իր մարմինը և ինքնուրույն որոշել անգամ օրգանների կամ հյուսվածքների վաճառքի հարցը: Այստեղ արդիականանում է սաղմին որպես իրավունքի սուբյեկտ ճանաչելու հանգամանքը:¹⁵

ՀՀ օրենսդրության մեջ առկա է անգամ կիրառվող եզրույթների ճշգրտման անհրաժեշտություն, հետևաբար իրավական պաշտպանության միջոցները չեն կարող լինել ամբողջական և չեն

¹² «Մարդու արյան և դրա բաղադրիչների դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է արյան և դրա բաղադրիչների դոնորության առնչությամբ առկա իրավահարաբերությունները:

¹³ Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ արգելվում է կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառքը:

¹⁴ Gerald Dworkin Can You Trust Autonomy?// Bioethics and the law / Janet L. Dolgin, Lois L. Shepherd, 2009. էջ 46:

¹⁵ Մանրամասն տես՝ *Пестриков А.А.* Наследственные права и правовой статус эмбриона // *Наследственное право*, 2012, № 9. էջ 10:

կարգավորում այն բոլոր իրավահարաբերությունները, որոնք ծագում են քննարկվող ոլորտում:

Հետազոտության առարկայի շրջանակներում, մասնավորապես, քրեաիրավական պաշտպանության ենթակա իրավահարաբերությունները հետևյալն են՝

1. Փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը – Օրենքի 1-ին հոդվածում փոխպատվաստումը սահմանված է որպես բացակայող կամ ախտաբանական գործընթացի հետևանքով վնասված հյուսվածքների կամ օրգանների փոխարինում սեփական կամ այլ օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով: ՀՀ քր. օր-ի 125-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում մարդու մարմնի մասը կամ հյուսվածքները վերցնելու կամ փոխպատվաստման՝ օրենքով նախատեսված պայմաններն ու կարգը խախտելու համար, որն անզուգույնությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամ ընդունողի առողջությանը: Այստեղ կարևորվում է հետևանքը՝ ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառումը մարմնի մասեր կամ հյուսվածքներ տվողի կամ ընդունողի առողջությանը¹⁶, իսկ 2-րդ մասով տուժողի մահը:

Փոխպատվաստումն իրականացնելու կարգը, ինչպես նաև փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները սահմանված են ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունված թիվ 1260-Ն որոշմամբ: Նշված որոշման համաձայն՝ կենդանի կամ դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով վերցվում են միայն այն օրգանները և (կամ) հյուսվածքները, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի թիվ 502-Ն

¹⁶ Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014թ.-ի օգոստոսի 14-ի N 860-Ն որոշմամբ հստակեցված են այն չափանիշներն ու չափորոշիչները որով հաստատվում է առողջությանը պատճառված վնասի ծանր, միջին կամ թեթև լինելը:

որոշմամբ սահմանված՝ փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկում¹⁷:

Ներկայումս ոչ մի պետություն ի վիճակի չէ ամբողջ ծավալով բավարարել փոխպատվաստման նպատակով օգտագործվող մարդկային օրգանների պահանջարկը և փոխպատվաստման վիրահատության սպասող անձանց թիվն ավելի արագ է աճում, քան այդ օրգանների առաջարկը: Նշված հանգամանքը չի կարող չօգտագործվել հանցավոր կազմակերպությունների կողմից, քանի որ փոխպատվաստման համար անհրաժեշտ օրգանների սակավաթվության պայմաններում այդ ոլորտում իրականացվող հանցավոր գործունեությունն առավել եկամտաբեր է:

Մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է ՀՀ քր. օր-ը լրացնել հետևյալ վերտառությամբ ու բովանդակությամբ հոդված 125.1-ով՝ «Հոդված 125.1. Փոխպատվաստման վիրահատության կանոնների խախտմանը նպաստելը

1. Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու կամ մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու պայմանները կամ կարգը խախտելուն նպաստելը, որն անգոռուշությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս է պատճառել օրգաններ և (կամ) հյուսվածքներ տվողի և (կամ) ընդունողի առողջությանը...»¹⁸:

Նման ձևակերպումն այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ առաջարկվող հոդվածով քրեականացվող արարքներն ամբողջությամբ ներառվում են ՀՀ քր. օր-ի 125-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակցության մեջ և առանձին կարգավորումը հիմնավորված չէ:

Մասնագիտական գրականության մեջ օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման կանոնների խախտման հա-

¹⁷ Այդ ցանկում ներառված են հետևյալ օրգանները և հյուսվածքները՝ սիրտ, երիկամ, փայծաղ, լյարդ, թոք, ենթաստամոքսային գեղձ՝ 12-մատկյա աղիքի հետ, էնդոկրին գեղձեր, սիրտ-թոք համալիր, լյարդ-աղիք, եղջրաթաղանթ, մաշկ, ոսկոր, էնդոկրին հյուսվածք, անոթներ:

¹⁸ Վարդապետյան Ա. Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու քրեաիրավական հիմնախնդիրները: Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, 2012. էջ 6:

մար տարբերակված մոտեցում դրսևորելու առաջարկություն է եղել, մասնավորապես առաջարկվել է առանձնացնել պատասխանատվություն հետևյալ արարքների համար՝

1 – կենդանի դոնորից օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման կանոնների խախտման,

2 – դիակային դոնորից օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման կանոնների խախտման,

3 – օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստում իրականացնելու լիազորություն չունեցող հաստատությունում կամ լիազորություն չունեցող անձի կողմից նման վիրահատություններ կատարելու:¹⁹

Նման տարբերակված մոտեցումն արդարցված կարող է լինել միայն այն դեպքում, երբ կարգավորման առարկա հանդիսացող օրգանների և հյուսվածքների ստացման, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ լինի խիստ տարբերակված մոտեցում, ինչպես նաև տարբերակված լինեն դրանց փոխպատվաստման վիրահատությունների իրականացման կարգերը:

2. Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը – ՀՀ քր. օր-ի 127-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում անձին՝ առանց իր ազատ կամաարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար: Բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու եղանակները կարող են տարբեր լինել՝ խաբեությունը, վստահությունը չարաշահելը, սպառնալիքը և այլն:

Ազատ կամաարտահայտություն ասելով հասկացվում է բժշկական ու գիտական փորձերի ենթարկելու վերաբերյալ անձի՝ իր կամքն ինքնուրույն արտահայտելու ազատությունը: Հետևաբար, անձին բժշկական և գիտական փորձերի ենթարկելու նպատակով նրա կամքը ճշտելուն ուղղված ցանկացած գործողություն հանդիսանում է անձի կամաարտահայտության ազատության ոտնահարում և պետք է հիմք հանդիսանա արարքը ՀՀ քր. օր-ի 127-րդ հոդվածով որակելու համար:

¹⁹ Մանրամասն տե՛ս Կурлышева Н.О. Проблемы правового регулирования трансплантации органов и тканей человека в РФ // Доклад на конференции Дальневосточного государственного технического университета им. В.В. Куйбышева.

Իրագեկվածությունը տվյալ դեպքում նշանակում է, որ իրեն բժշկական և գիտական փորձերի ենթարկելու կապակցությամբ համաձայնություն տալուց առաջ անձը պետք է տեղեկացված լինի այդ փորձի բոլոր մանրամասների, այդ թվում՝ իր կյանքի կամ առողջության համար դրանց անվտանգության երաշխիքների վերաբերյալ: Հանցանքն ավարտված է համարվում մարդուն առանց իր համաձայնության համապատասխան փորձերի ենթարկելուն ուղղված առաջին իսկ գործողությունը կատարելու պահից՝ անկախ հետևանքների առաջացումից:

Բժշկական կամ գիտական փորձերի ենթարկվելու համաձայնություն տալուն ուղղված հարաբերությունները հանդիսանում են բիոէթիկայի հիմնախնդիրներից մեկը և նույնպես բխում են «սա իմ մարմինն է» սկզբունքից:

Առավել զգուշավոր պետք է լուծվի հարցը երեխաների համաձայնությունը ստանալիս, քանի որ վերջիններս համարվում են անգործունակ մինչև 14 տարեկանը և սահմանափակ գործունակ մինչև 18 տարեկան հասակը: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

Ելնելով վերոնշյալ կարգավորումից և առկա հակասական մեկնաբանություններից հատուկ պետք է կարգավորվի երեխաների համաձայնությամբ գիտական կամ բժշկական փորձերի ենթարկելու արգելքը:

Հիմք ընդունելով այն, որ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բժշկության և կենսաբանության

ուղորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը.. և մարդու վերարտադրողական կլոնավորումը, անհրաժեշտություն է առաջանում քրեականացնել եվգենիկական փորձերը և մարդու վերարտադրողական կլոնավորումը՝ ընդ որում իմպերատիվ կերպով՝ անկախ անձի տրված համաձայնության առկայությունից կամ բացակայությունից:

3. Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը – Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ կենդանի դոնորին օրգաններ տալու համաձայնությանը հարկադրող ցանկացած անձ ենթակա է պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հիմնական օբյեկտն անձի ազատության, իսկ լրացուցիչ օբյեկտը՝ մարդու կյանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են:²⁰

Հոդված 126-ի 1-ին մասը պատասխանատվություն էր սահմանում փոխպատվաստման կամ գիտափորձերի նպատակով անձին մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելու համար, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Ընդ որում, հարկադրանքի նշված եղանակները կարող էին գործադրվել ինչպես տուժողի, այնպես էլ՝ նրա մերձավորների նկատմամբ: Քանի որ ՀՀ քր. օր-ի 132 և 132.2-րդ հոդվածներով նախատեսված է շահագործման ձև՝ օրգան կամ հյուսվածքներ վերցնելը, հետևաբար որևէ տարբերություն նշված հոդվածի և մարդու թրաֆիքինգի կամ շահագործման միջև չկար, ինչը հանգեցրեց նրան, որ ՀՀ քր. օր-ի 126-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվեց: Սակայն այս պարագայում չկարգավորված մնաց այն իրավիճակը, երբ դիակային դոնորից օրգան կամ հյուսվածք են վերցնում հարկադրանք կիրառելով վերջինիս մերձավոր ազգականների նկատմամբ:

Չնայած օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելը հիմնականում կատարվում է փոխպատվաստման նպատակով, այնուամենայնիվ չեն բացառվում նաև այլ նպատակները, օրինակ՝ մարդակերությունը (հանիբալիզմը): Յու. Անտոնյանը տարանջա-

²⁰ ՀՀ-ում գրանցվել է օրգանների կամ հյուսվածքների թրաֆիքինգի միյան մեկ դեպք, որն ավարտվել է մեղադրական դատավճռով: Մանրամասն տես քրեական գործ ԵԿԴ/0107/01/12 Մերգել Հայկի Հովսեփյանի վերաբերյալ:

տում է հանիբալիզմի 2 տարատեսակ՝

1 – սուր սովով պայմանավորված հանիբալիզմ՝ այն կարող է ի հայտ գալ արտակարգ իրավիճակներում, այսինքն որպես ինքնանպատակ մարդակերություն,

2 – ծիսական կամ սիմվոլիկ հանիբալիզմ, երբ ուտելով օրգանը կամ հյուսվածքը անձը փորձում է հաճոյացնել իր աստվածներին, օժտել իրեն գերբնական ուժով կամ ստանալ որևէ առավելություն:²¹

Օրգանները կամ հյուսվածքները կարող են վերցվել նաև արդյունաբերության մեջ օգտագործելու, հավաքածուներ պատրաստելու, կրոնական ծիսակատարությունների և այլ նպատակների համար:

Դեռ անցյալ դարի 90-ական թվականներին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, նկարագրվում էին բազմաթիվ դեպքեր, երբ մասնավորապես կանայք, նկատելով կայարաններում առանց խնամքի մնացած երեխաներին, համոզելու կամ խաբեության միջոցով, երեխաներին ուղեկցել են շինությունների չբնակեցված կամ քողարկված սենյակներ, որտեղ «տնային հոսպիտալի» պայմաններում իրականացվել են օրգանների կամ հյուսվածքների վերցման վիրահատություններ²²: Հայաստանի վերաբերյալ նման տեղեկություններ չկան, բայց ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ օրգանների կամ հյուսվածքների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների լատենտայնությունն անչափ բարձր է (ՀՀ-ում նման դեպքերի բացակայությունը կարող է պայմանավորված լինի փոխպատվաստման վիրահատությունները խիստ սահմանափակ հաստատություններում իրականացնելու պայմանով):

Ստամբուլյան հոչակագրի համաձայն՝ օրգանների թրաֆիքինգը՝ փոխպատվաստման համար օրգաններն օգտագործելու նպատակով՝ կենդանի կամ մահացած անձանց կամ նրանց օրգանները վարձելը, հավաքագրելը, տեղափոխելը փոխանցելը կամ թաքցնելն է, ինչպես նաև փաստաթղթերը կեղծելն է, որը գուցարդվել է բռնություն կամ դրա սպառնալիք կամ հարկա-

²¹ Մանրամասն տես՝ *Антонян Ю.М.* Убийство ради убийства. М., 1998. էջ 189:

²² Մանրամասն տես՝ *Дубрягин Ю.* Как не пропасть без вести. СПб., 1996. էջ. 133–137:

դրանքի այլ եղանակներ կիրառելով, առևանգամբ, խաբեությամբ, հավանական դոնորի նկատմամբ վերահսկողություն ստանալու նպատակով երրորդ անձանց վճարումներ կամ այլ օգուտներ տալով կամ ստանալով: Նման սահմանումը պատահական չէ, քանի որ անգամ ԱՀԿ-ի պաշտոնական զեկույցների համաձայն՝ փոխպատվաստման բժշկական կենտրոններ դոնորական հյուսվածք շատ հաճախ ստանում են համացանցի կամ տեղեկատվական այլ եղանակներով՝ երբեմն շրջանցելով նաև օրենքը կամ ստեղծելով իրենց համար առավել նպաստավոր օրենսդրություն:

Ստամբուլյան հոչակագրի համաձայն՝ օրգանների ապօրինի առևտուրը, որը տասնյակ տարիներ քննադատվում է միջազգային տարբեր կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՀԿ-ի կողմից, վերջին ժամանակներում հատկապես տարածում է ստացել՝ վերածվելով համաշխարհային հիմնախնդրի: Ստամբուլյան հոչակագրում նշվում է, որ օրգանների ապօրինի առևտրի, ինչպես նաև օրգանների թրաֆիքինգի և փոխպատվաստման նպատակով կատարվող զբոսաշրջության ծավալների ընդլայնման պատճառը համաշխարհային համացանցի միջոցով հաղորդակցվելու դյուրինությունն է, ինչպես նաև հարուստ երկրների հիվանդների կողմից դրսևորվող՝ փոխպատվաստման նպատակով ճանապարհորդելու և օրգան գնելու պատրաստակամությունը:

Օրգանների կամ հյուսվածների քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրն առավել խորն է, քան թվում է առաջին հայացքից, սակայն դրա կարգավորումը պետք է լինի ոչ միայն իրավական, այլ նաև բժշկական գիտելիքների համապարփակ և միասնական զարգացման արդյունք:

Ելնելով վերոգրյալից և համադրելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի հետ՝ կարելի է եզրահանգել, որ առկա են հետևյալ բացերը՝

1 – կարգավորված չէ բջիջների պաշտպանությունը, առավել ևս կարգավորված չեն դրանց օգտագործման արդյունքում հնարավոր հետևանքների իրավական գնահատականը,

2 – էմբրիոնի պաշտպանությանն իրականացվում է խիստ թերի՝ անգամ այն դուրս թողելով Օրենքի կարգավորումից, մասնակիորեն դա կարգավորելով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ

օրենքով,

3 – նախատեսված չէ պատասխանատվություն օրգանները կամ հյուսվածքները վաճառելու այն դեպքերի համար, երբ դա իրականացվում է անձի համաձայնությամբ՝ առանց որևէ հարկադրանքի, չնայած նման պահանջ նախատեսված է Օրենքի 2-րդ հոդվածով,

4 – ազգային օրենսդրության մեջ կիրառվող եզրույթները չեն համապատասխանում միջազգային միտումներին և/կամ տեսական ձևակերպումներին,

5 – սեռական օրգանների՝ ամորձիների և ձվարանների առնչությամբ Օրենքով բացառության նախատեսումը հիմնավորված չէ,

6 – դիակային դոնորից օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու համար քրեական պատասխանատվությունը բացակայում է, եթե ապահովվել է այդ ընթացակարգի լուրջ ձևական կողմը և փոխպատվաստման կանոններն ինքնին խախտված չեն,

7 – սահմանադրական փոփոխություններից հետո կարգավորված չէ եվգենիկական փորձերի և մարդու վերարտադրողական կլոնավորման առնչությամբ իրավահարաբերությունների ամբողջականությունը:

Ելնելով վերոգրյալից կարելի է տալ հետևյալ առաջարկությունները՝

1 – Դիակային դոնորության լայն տարածումը կհանգեցնի փոխպատվաստանյութի պահանջարկի բավարարմանն այս եղանակով, սակայն անհրաժեշտություն է առաջանալու նաև նախատեսել պատասխանատվության լրացուցիչ տարբերակներ, ներառյալ՝ քրեական, դիակներից օրգաններ կամ հյուսվածքներ ապօրինի վերցնելու դեպքերի համար՝ հստակեցնելով համաձայնություն ստանալու եղանակն ու ձևը:

2 – Պետք է հստակեցվեն վերահսկողական մեխանիզմները և դրանց իրականացումը ոչ միայն առողջապահական ոլորտի մարմինների կողմից, այլ նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ ճիշտ իրավական գնահատականներ տալու համար:

3 – Կենդանի դոնորին տրամադրվող վարձատրությունը պետք է հանդիսանա ոչ թե օրգանի կամ հյուսվածքի համար վար-

ձատրություն, այլ որպես ռեցիպիենտի բուժման և նրա հոգեֆիզիոլոգիական վերականգնման հատուցում:

4 – Անհրաժեշտ է վերանայել Օրենքի կարգավորման առարկան՝ բացառությունների շարքից հանելով «ձվարաններ, ամորձիներ» եզրույթները:

5 – Ցանկալի է ազգային օրենսդրության մեջ կիրառվող եզրույթները համապատասխանեցնել միջազգայնորեն ընդունված եզրույթներին՝ պաշտպանությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

6 – Անհրաժեշտ է պատասխանատվություն (պարտադիր չէ քրեական) սահմանել օրգան կամ հյուսվածքներ առնելու առաջարկության համար, քանի որ և՛ միջազգային, և՛ ազգային օրենսդրությունն արգելում են շահույթ ստանալ օրգանների կամ հյուսվածքների վաճառքից: Բոլոր դեպքերում դոնորը պետք է ստանա պատշաճ բուժօգնություն (հարկ եղած դեպքում՝ անվճար)՝ փոխպատվաստման (անգամ հեռավոր) հետևանքների առաջացման դեպքում:

7 – անհրաժեշտ է լայն քննարկման դնել մարդու կողմից իր օրգանները կամ հյուսվածքները շահույթ չհետապնդելու պայմաններում տնօրինելի իրավաչափության հարցը:

8 – հատուկ պետք է կարգավորել երեխաների համաձայնությամբ գիտական կամ բժշկական փորձերի ենթարկելու արգելքը՝ անկախ վերջիններիս կամ նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնությունից:

9 – ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասը հիմք ընդունելով պետք է քրեականացնել եվգենիկական փորձերը և մարդու վերարտադրողական կլոնավորումն իրականացնելը:

10 – Օրգանների կամ հյուսվածքների շրջանառության, ինչպես նաև առհասարակ բիոէթիկայի հարցերին վերաբերող հարաբերությունների կարգավորումը պետք է իրականացվի բազմամասնագիտական խմբի կողմից, որում առնվազն ներառված կլինեն իրավաբաններ, բժիշկներ, կենսաքիմիկներ, փիլիսոփաներ, սոցիալական ծառայողներ, հոգեբաններ:

**ՀԱՆՂՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԻՈԷԹԻԿԱՅԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.
ԲԺԻՇԿ-ՀԻՎԱՆԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տ. Փիրումյան

*ԵՊՀ, Սոցիալական փիլիսոփայության
և բարոյագիտության ամբիոնի ասպիրանտ*

Ժամանակակից աշխարհի սոցիոմշակութային առանձնահատկություններից մեկը հանդուրժողականության՝ որպես բարոյական նորմի կիրառման առաջնայնության սկզբունքն է մարդկային ցանկացած հարաբերություններում: Հանդուրժողականության սկզբունքի կիրառման կարևորությունը դրսևորվում է արդի աշխարհի գրեթե բոլոր ոլորտներում՝ բարոյական, բժշկական, քաղաքական, տնտեսական, մշակութային, իրավական, սոցիալական և այլն: Որպես սոցիոմշակութային նորմ՝ հանդուրժողականության սկզբունքը ենթարկվել և ենթարկվում է իմաստային մի շարք փոփոխությունների: Եթե հանդուրժողականության սկզբունքի առաջնայնության կարևորությունը թվում է անվիճելի, ապա հանդուրժողականության՝ որպես բարոյական առաքինության էության սահմանման խնդիրը թերևս վիճահարույց է նաև այժմ: Բանն այն է, որ հանդուրժողականության՝ որպես էթիկական նորմի առաջացումը պայմանավորված է եղել այլ սոցիոմշակութային նախապայմաններով, մինչդեռ այժմ այն կիրառվում է ամբողջովին տարբեր բարոյական, հասարակական, քաղաքական և մշակութային նախապայմաններում: Արդի աշխարհի սոցիոմշակութային նախադրյալների համատեքստում հասկանալու համար, թե ինչ է հանդուրժողականությունը և ինչպիսի դերակատարում ունի արդի բիոէթիկայի հիմնախնդիրներում, մասնավորապես՝ բժիշկ-հիվանդ հարաբերություններում, պետք է նախ և առաջ անդրադառնանք հանդուրժողականություն հասկացության ծագումնաբանությանը ու բովանդակությանը: Հանդուրժողականությունն ինքնին բարդ և բազմաբովանդակ սոցիոմշակութային երևույթ է: «Հանդուրժողականության գաղափարը, որն առաջին հայացքից շատ պարզ է թվում, իրականում այնքան էլ միանշանակ չէ: Այն սերտո-

րեն կապված է փիլիսոփայական հիմնարար այնպիսի հարցերի հետ, որոնք ուղղված են մարդկային էության բացահայտմանը, իմաստավորմանն ու ընկալմանը, նրա ինքնությանը, իմացությանն ու հասկացողության սահմաններին և կարողություններին»¹: Սակայն խնդիրն այն է, որ մասնագիտական գրականությունում չկա հանդուրժողականություն հասկացության հստակ սահմանում: Հանդուրժողականության սկզբունքի սահմանման համար նախ և առաջ հարկ է նկատել, որ այն ցանկացած հասարակության, սոցիալական խմբի, քաղաքացու մշակույթի որակն է՝ անկախ տարիքից, սեռից, կրոնական, էթնիկ և ռասայական պատկանելությունից²: Ըստ հանդուրժողականություն հասկացության լեզվաբանական վերլուծության՝ լատիներեն «tolerantia» բայը սահմանվում է առաջին՝ որպես օրգանիզմի կարողություն դիմադրելու որևէ նյութի կամ թույնի բացասական ազդեցությունը, երկրորդ՝ համբերատար վերաբերմունք ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի նկատմամբ³: Տարբեր լեզուներում հանդուրժողականությունն ունի տարբեր իմաստներ՝ կախված տվյալ ազգի մշակույթային, պատմական, ազգային մի շարք առանձնահատկություններից:

Որպես բարոյական նորմ՝ հանդուրժողականությունն առաքինություն է, որը մեզ մղում է ինքնակամ հրաժարվել սխալ, ոչ բարոյական արարքներից: Հանդուրժողականությունը մարդու բանական արձագանքն է, ինչի դրսևորման մակարդակը կախված է անհատի գիտելիքներից և անձնական փորձից: Սակայն սա չի նշանակում, որ ինտելեկտի առկայությունն անպայմանորեն ենթադրում է հանդուրժողական գիտակցության ձևավորում և հանդուրժողական զգացումի մակարդակի բարձրացում: Շատ հաճախ հենց այդ ինտելեկտուալների կողմից է իրականացվում անհանդուրժողականության դրսևորումներ, որոնք կարող են ուղեկցվել բռնությամբ, ատելության զգացումով և բազմաթիվ այլ բացասական երևույթներով⁴: «Հանդուրժողականությունն ամեննին էլ չի

¹ Лекторский В.А. О толерантности, плюрализме и критицизме // Вопр. Философии, 1997, № 11. СС. 46–54.

² Տե՛ս «Толерантность» // Общ. ред. М.П. Мчедлова. М.: Республика, 2004. էջ 9:

³ Տե՛ս Современный словарь иностранных слов. М.: Русский язык, 1993. էջ 610:

⁴ Տե՛ս Тшиков В.А. Толерантность и согласие в трансформирующихся обществах // Очерки теории и политики этничности в России. М.: Русский мир, 1997. էջ 47–52:

նշանակում համբերատար վերաբերմունք սոցիալական անարդարությունների նկատմամբ. այն հավասարագոր չէ անտարբերությանը: Լինել հանդուրժող չի նշանակում հրաժարվել սեփական հանդուրժողականությանը և ընդունել այլ աշխարհայացքներ»⁵: Հանդուրժողականությունը սոցիալական արժեք է, որն ապահովում է մարդու իրավունքը, ազատությունը և անվտանգությունը: Այն ակտիվ սոցիալական վարքի դրսևորում է, անհրաժեշտություն, որին մարդ հանգում է ինքնակամ և գիտակցաբար: Առաջանալով հասարակական գիտակցության մեջ՝ հանդուրժողականությունը ձևավորվում է որպես հասարակական իդեալ և ենթադրում է հասարակության կողմից տարբեր դիրքորոշումների ընդունում: Սոցիոմշակութային վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ հանդուրժողականություն հասկացությունը զարգացում է ապրել՝ կրոնական հանդուրժողականությունից անցում կատարելով դեպի սոցիոմշակութային և բարոյական հանդուրժողականություն: Ուստի հանդուրժողականության նշանակությունը ևս փոփոխություն է կրել, և ներկայումս ընկալվում է որպես բարոյական սկզբունք և արդի աշխարհի գլխավոր ունիվերսալ արժեք: Պատմամշակութային զարգացման արդյունքում «պասիվ» հանդուրժողականությունը, որն ենթադրում էր խոնարհություն, համբերատարություն, վերածվում է ակտիվ կառուցողական հանդուրժողականության»⁶:

Մի շարք փիլիսոփայական բառարաններում հանդուրժողականություն հասկացությունը նույնացվում է համբերատարություն հասկացության հետ և օգտագործվում որպես համբերատարության հոմանիշ: Սակայն, համբերատարությունը՝ ի տարբերություն հանդուրժողականության, սոցիալական վարքի դրսևորման ավելի պասիվ ձև է: Հանդուրժողականությունն ամենևին էլ այլոց նկատմամբ պասիվ-կրավորական վարքի ձև չէ, ինչը բնութագրական է համբերատարությանը: Ակնհայտ է, որ ոչ մի դեպքում չպետք է հանդուրժել այն դրսևորումները, որոնք խախտում են համամարդկային բարոյականության հիմնական սկզբունքները, և

⁵ *Абдулатинов Р.Г.* Этнополитология. Учебное пособие для студентов высших учебных заведений. СПб., Питер, 2004. С. 182.

⁶ *Кораблева А.А.* Аксеологический подход к определению толерантности / Ярославский педагогический вестник, М., 2012, № 2. С. 43.

այդ իսկ պատճառով էլ հարկավոր է տարբերել համբերատար, հանդուրժող վերաբերմունքը «պասիվ» համբերատարությունից: Մինչդեռ հանդուրժողականությունը ենթադրում է ոչ թե ներողամտություն, այլ բարյացակամություն, երկխոսություն և համագործակցության պատրաստակամություն⁷:

Անդրադառնալով բիոէթիկայի համատեքստում հանդուրժողականության խնդրին, պետք է նկատել, որ արդի բիոէթիկական երկրնտրանքների և հիմնախնդիրների (բժիշկ-հիվանդ փոխհարաբերություն, հղիության արհեստական ընդհատում, փոխնակ մայրություն, էֆթանագիա, կլոնավորում, գենային ինժեներիա, օրգանների փոխպատվաստում) հիմքում պետք է ընկած լինի հանդուրժող և հարգալից վերաբերունքը հիվանդի ազատ ընտրության և հիվանդի նկատմամբ առհասարակ: Հանդուրժողականությունը բժշկական էթիկայի կարևոր արժեք է: Բժշկի կողմից հիվանդի բուժման հավանականությունը ավելի է մեծանում այն դեպքում, երբ հիվանդը հանդուրժող, նրբանկատ և հարգալից վերաբերմունք է նկատում բժշկի կողմից: Բժիշկ-հիվանդ հարաբերություններում հանդուրժողականության դրսևորումը վառ վկայությունն է այն բանի, որ բժիշկը ընկալում և զգում է հիվանդին: Բժիշկ-հիվանդ երկխոսության ընթացքում պետք է գերիշխի փոխըմբռնումը և հանդուրժողականությունը, քանի որ բուժման ընթացքն ու արդյունավետությունը անմիջականորեն կախված է բժշկի և հիվանդի միջև ձևավորված հարաբերությունների բնույթից: Բժիշկը նախ և առաջ պետք է հաշվի առնի հիվանդի անհատական ապրումներն ու առանձնահատկությունները, քանի որ, ի տարբերություն բժշկի, որի համար առավելապես կարևոր է հիվանդությունը և դրա բուժման ընթացքը, հիվանդի համար առավել կարևոր են իր սուբյեկտիվ հուզումներն ու մտորումները սեփական հիվանդության առնչությամբ⁸:

Բժիշկ-հիվանդ հարաբերությունների կարևոր սկզբունքներից են հարգանքը հիվանդի ազատ ընտրության և իրավունքների նկատմամբ, տեղեկացված (իրագեկված) համաձայնությունը և բժշկական գաղտնիքի պահպանումը: «Հիվանդի ինքնավարության

⁷ Sté u Установление культуры мира: универсальные ценности и гражданское общество. Тверь, 2001. էջ 66:

⁸ Sté u *Конечный Р., Боухал М.* Психология в медицине, Прага, 1974. էջ. 188–189:

նկատմամբ հարգանքն իրազեկված համաձայնության հիմքն է: Բժիշկը պարտավոր է համապատասխան ինֆորմացիա տրամադրել հիվանդին հիվանդության և բուժման հնարավոր տարբերակների մասին»⁹: Յուրաքանչյուր հիվանդի հիմնարար իրավունքն է ստանալ համապատասխան տեղեկատվություն սեփական հիվանդության և դրա հետագա զարգացումների մասին՝ ընդունելով կամ մերժելով բժշկի կողմից առաջարկված բուժման ընթացքը¹⁰: Բժիշկը պարտավոր է հիվանդին իրազեկել նրա առողջական վիճակի և հիվանդության մասին, բուժման ընթացքի, մեթոդների և հնարավոր ռիսկերի մասին: Ուստի բժիշկը պետք է հանդուրժողաբար և պատրաստակամորեն նախապատրաստի հիվանդին՝ հիվանդության մասին տեղեկությունն այնպես հաղորդելով, որպեսզի վերջինս կարողանա ճիշդ ընտրություն կատարել: Բժիշկը պարտավոր է հարգել հիվանդի ցանկացած ընտրություն՝ հանդուրժողաբար և բարեխղճորեն իրականացնելով նրա ցանկությունը:

